AZG NEW SHABAT 1.QXD 28/08/2014 22:31 Page 1


# Ազգ
Azg

29 ՕԳՈՍՏՈՍ 2014 ՈՒՐԲԱԹ 25(5335)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ISSN: 1829-1651


## Կալիֆոռնիայի Սենատի բանաձեւը ճանապարհ կհարթի

Օգոստոսի 27-ին Կալիֆոռնիայի նահանգային սենատն ընդունեց ԼՂՀ անկախության ճանաչման եւ Արցախի ժողովրդի ինքնորոշման մասին բանաձեւ, որով նաեւ կոչ էր արվում ԱՄՆ նախագահին եւ Կոնգրեսին՝ ջանքեր ներդնել եւ աջակցել ԼՂ Հանրապետության ինքնորոշման եւ անկախության ճանաչմանը։ Սա, կարելի է ասել, Արցախի եւ հայության համար աննախադեպ նշանակության մի բանաձեւ է, որ կարող է նաեւ ճանապարհ հարթել այլ նահանգների եւ այլ պետությունների կողմից համանման բանաձեւերի ընդունման համար։Կալիֆոռնիայի Սենատի որոշումը ողջունել է նաեւ Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը**, ով ըստ ԱԳՆ հաղորդագրության հայտարարել է.«Որքան Ադրբեջանը շարունակի խոչընդոտել ղարաբաղյան հիմնախնդրի լուծմանն ուղղված Հայաստանի եւ եռանախագահների ջանքերը, այնքան համանման նորանոր որոշումներ եւ բանաձեւեր կարելի է ակնկալել, որոնք ճանապարհ կհարթեն դեպի ԼՂՀ միջազգային ճանաչում»։

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Քաոսն էլ ո՞նց է լինում

Քաղաքագիտության մեջ կա մի այսպիսի տեսություն՝ քաոսի քաղաքականություն։ Վերջին տարիներին միջազգային մամուլը շատ է գրում այս մասին, առնվազն մեկ անգամ գրել է նաեւ մեր թերթը։ Էությունը հետեւյալն է՝ օգտագործելով առկա հակասությունները, աշխարհի որեւէ տարածաշրջանում հրահրում կամ սրում ես հակամարտություններ, դրանք հասցնում շիկացման եւ կողմերի ուժասպառ լինելուց հետո միջամտում՝ նախապես ապահովվելուց հետո քո շահաբաժինը։ Եվ կամ՝ բնավ էլ չես միջամտում, մինչեւ մեկ այլ տեղ մեկ այլ հակամարտության բռնկում։ Այլ խոսքով՝ դա վերահսկվող քաոս է, որտեղ սանձերը միշտ պետք է պահել ձեռքիդ։

Իմ տպավորությամբ Վաշինգտոնը վերջին շրջանում կորցրել է սանձերը Միջին եւ Մերձավոր Արեւելքում, որն իր ներքին հակասություններով ու հակադրություններով ամենահարմար վայրն էր քաոսի վերածվելու։ «Արաբական գարնան» շղթայական բռնկումից հետո գլխավոր խաղացողներին՝ Մ. Նահանգներին, Թուրքիային, Քաթարին, Իսրայելին, ՆԱՏՕ-ի մյուս ուժերին հաջողվեց սասանել կամ գլխովին ջախջախել «անհնազանդ» երկրների իշխանություններին եւ տեւական հակամարտության մեջ պահել ողջ տարածաշրջանը, հատուկ հոգածության արժանացնելով նավթառատ երկրներն ու նավթուղիները։ Մինչ այդ Մ. Նահանգները «խաղաղեցրել» ու «կարգավորել» էր հետսադդամյան Իրաքը եւ զորքերը քաշելու խոստումը հարգելու պահը հասել էր նախագահ Օբամայի համար...

Բայց ISIS-ը կամ խալիֆաթականները խառնեցին բոլորի հաշիվները, անցան իրենց համար նախագծված կարմիր գիծը, այսինքն՝ Սիրիա-Իրաք սահմանը, արշավեցին Մոսուլ եւ այժմ սպառնում են Բաղդադին, հյուսիսային շրջաններին։ Մնացյալը հայտնի է...

Այժմ անհրաժեշտ է զսպել սահմանախախտներին։ Բայց ինչպե՞ս։ Նոր ներխուժումը առայժմ բացառված է։ Մնում է նրանց ռմբակոծել օդից։ Սակայն դրանով չես կարող ոչնչացնել նրանց (գուցեեւ պետք էլ չէ ոչնչացնել), որոնք խորապես արմատավորված են սուննի ազգաբնակչության մեջ։ Քուրդ «փեշմերգաները», որքան էլ լավ ռազմիկներ, չեն կարող նրա հախից գալ մենակ։ Ուրեմն պետք է զինել քրդերին, միաժամանակ, ինչպես հրահանգեց նախագահ Օբաման, վերահսկել, առայժմ, խալիֆաթականների շարժումները սիրիական երկնքից, ի հարկին դեմ չլինելով հարվածել նրանց որջերը այդ երկրում։ Նման պարագաներում կարող է աշխատել արաբական հին իմաստությունը՝ «Թշնամուս թշնամին բարեկամս է»։ Ասադը Վաշինգտոնի բարեկա՞մ։ Ինչո՞ւ ոչ։ Մեկ է, Սիրիայի նախագահը դեռ երկար տարիների կարիք ունի երկիրը վերականգնելու, պետությունը, թեկուզ երկրի որեւէ մասում, վերակազմակերպելու համար։ Նա վնասազերծված է։

Այո, իսկական քաոս է։ Ոչ միայն Իրաքում, Սիրիայում, այլեւ Լիբիայում, Գազայի շուրջը, իսկ երեկվանից արդեն՝ Իսրայելի սահմանից ընդամենը 200 մետր հեռու սիրիական Ղունեյտրա ավանում, որը «Ան Նուսրայի» ջիհադիստները առավոտյան խլեցին կառավարական զորքերի ձեռքից։

Քաոսը այս պարագայում լայնընդգրկուն է։ Վերահսկելը խիստ դժվար։

Միայն քաոս ստեղծողը ի վիճակի է խաղաղեցնելու տարածաշրջանը։ Խաղաղասերները դա են ակնկալում Վաշինգտոնից։ Չէ՞ որ ամերիկյան ֆիլմերը սովորեցրել են բոլորիս, որ երկրագնդին սպառնացող որեւէ վտանգի դեմն առնում են միայն Մ. Նահանգների նախագահները։

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Մեր քաղաքական վերնախավին արժեզրկող երկու ամառ




Արդեն երկրորդ տարին է, որ ամառն անակնկալ է մատուցում մեր իրականությանը՝ գնում ենք ամառային արձակուրդ մեկ, սեպտեմբերին վերադառնում բոլորովին այլ իրավիճակում։ Անցած տարի սեպտեմբերի 3-ի՝ Եվրասիական տարածքին Հայաստանի անդամակցության ցանկության բարձրաձայնմամբ ամեն բան փոխվեց 360 աստիճանով , այս տարի օգոստոսյան սահմանային լարումները ոտնիգլուխ շուռ տվեցին մեր կյանքը, ակտուալ դարձնելով լրիվ այլ օրակարգ։ Ընդ որում՝ տարբեր մակարդակի մանր-մունր սադրանքները (ասենք՝ ինքնաթիռի չնախատեսված վայրէջք Երեւանում հարբած ադրբեջանցու պատճառով, ում ուզել էին հանձնել հայկական կողմին, կամ կեղծ դիվերսանտի մասին լուրը ադրբեջանական կողմից եւ այլն) ցույց են տալիս, որ նոր օրակարգը դեռ թելադրելու բավական ներուժ եւ դրդիչներ ունի, որքան էլ զարմանալի՝ փրկություն որպես անգործության մատնված մեր քաղաքական դաշտի համար, իսկ իրականում որպես բալաստ՝ աշխարհաքաղաքական փոփոխությունների հայկական մասին։

Ամառվա սկզբին Հայաստանի խորհրդարանական չորս ուժերին թվում էր, թե իրենք ակտուալ են եւ օրակարգ են թելադրում՝ վարչապետափոխություն, միասնական հանրահավաքի եւ թեժ աշնան հերթական խոստումներ սեպտեմբերի համար։ Հիմա, չնայած նրան, որ այդ ուժերն էլի հանդիպում են, խոստանում միասին վճիռներ կայացնել, բայց այս օգոստոսի վերջին առավել, քան երբեւէ պարզ է դարձել, որ նրանք արդիական խնդիրներից կիլոմետրերով հեռու լինեն կարծես, քանզի այլ իրողություններ են դարձել օրվա տերը։

⇨2

## Հանրապետական փառատոն՝ նոր սերնդի բազմակողմանի զարգացման համար



Մեր ներկա համարում (էջ 11) տպագրում ենք Հայաստանի հանրակրթական դպրոցներում անցկացվող «Երգը բարեկամության կամուրջ է» վերտառության ներքո ռուսական երգի հանրապետական 3-րդ փառատոնի կանոնակարգը ամենայն մանրամասնությամբ։ Ռուսաստանի հայերի միության գլխավորությամբ եւ Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնի, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության, Երեւանի քաղաքապետարանի եւ տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությամբ 3-րդ անգամ կազմակերպվող այս փառատոնի հասցեատերերը ողջ Հայաստանի դպրոցականներն են։ Այլ խոսքով՝ փառատոնն ընդգրկում է դպրոցահասակ մեր ամբողջ սերունդը եւ իր տեսակի մեջ եզակի է իր տարողությամբ ու, հետեւաբար, խիստ պատասխանատու նախաձեռնություն է։ Եվ, բնականաբար, նման կարեւորությամբ նախաձեռնությունը չի կարող որպես նպատակ եւ միջոց լավ կազմակերպված, խորապես ուսումնասիրած չլինել։ Մանավանդ որ ծրագիրը միայն երգին չի վերաբերում, այլեւ ներառում է ռուսաց լեզվի ու մշակույթի ուսուցման, ռուսաց լեզվով լավագույն շարադրության մրցույթներ, որոնք միտված են երեխաներին ծանոթացնել, իմացնել եւ ըստ ամենայնի սիրելի դարձնել ռուսաց լեզուն, երգը, մշակույթը։

Ոմանք թերեւս փորձեն քաղաքականացնել այս կարեւոր նախաձեռնությունը եւ այն դիտարկեն որպես մեր երկրում ռուսական ազդեցությունը զորացնելու ձեռնարկ։ Չարաչար կսխալվեն նման ձեւով մտածողները։ Քանզի՝

Առաջին՝ այս նախաձեռնությամբ ոչ հեռվից ու ոչ էլ մոտիկից խնդրո առարկա չի դառնում մայրենի լեզուն՝ հայերենը, ոչ էլ մեր ազգային մշակույթը։ Այլ, ընդհակառակը, ռուսաց լեզուն դիտարկվում է որպես օտար լեզու, ինչպես անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը եւ մյուս լեզուները։

Երկրորդ՝ նախաձեռնողները քաջ գիտակցում են, որ ավելի լայն եւ ավելի մրցունակ զարգացման հնարավորություն տալու համար մեր նորահաս սերնդին, անհրաժեշտ է մայրենի լեզվի ու մշակույթի կողքին առնվազն երկու օտար լեզվի տիրապետում, եւ այդ լեզուներից մեկը պետք է լինի, անկասկած, ռուսերենը, նկատի ունենալով տարածաշրջանային, ավանդական, տնտեսաքաղաքական մեր պայմանները։

Երրորդ՝ գոնե մինչեւ տեսանելի ապագան ռուսաց լեզվի դերը նախկին խորհրդային տարածքում, որպես այլալեզու ժողովուրդների միջեւ հարաբերակցության միջոց, կարող է նվազել, բայց չի կարող վերանալ։

Ահավասիկ, այս եւ այլ տվյալները նկատի առնելով, փառատոնի նախաձեռնողները շատ լրջորեն են ծրագրել մրցույթները, որոնք, վստահ ենք, ինչպես նախորդ երկու փառատոնները, կանցնեն ոգեւորության եւ խանդավառության մթնոլորտում։

«Ազգ»



**Փակ Լարսի բացած «Տանտալոսը»**

էջ 5



**Ադրբեջանը Կաննում, Բեռլինում, Վիեննայում եվ այլուր**

էջ Ա



**Երերուն Եվրոպան։ Նոր բնականոն երեւո՞ւյթ**

էջ 10

AZG NEW SHABAT 1.QXD 28/08/2014 22:31 Page 2



# Հայաստանում ԱՄՆ-ի նոր դեսպանի թեկնածուն Ռիչարդ Միլզն է

**Նախագահ Օբաման Ռիչարդ Մ. Միլզ կրտսերին է նշանակել Հայաստանում Մ. Նահանգների հաջորդ դեսպանի պաշտոնին, տեղեկացնում է «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթը: Սենատի կողմից հաստատվելուց հետո Միլզը փոխարինելու է Ջ. Հեֆերնին, որն այդ պաշտոնը զբաղեցնում է 2011 թվից: Միլզի թեկնածությունը նախ քննարկվելու է Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի նիստում, որին նախագահելու է սենատոր Ռոբերտ Մենենդեզը: Լսումների թվականը դեռ չի ճշտված:**



**Ռիչարդ Միլզ կրտսերը ճանաչված դիվանագետ է եւ զբաղեցրել է բազմաթիվ կարեւոր պաշտոններ: Ներկայիս նա Բեյրութի ամերիկյան դեսպանատանը Մ. Նահանգների Առաքելության փոխտնօրենն է: Խորհրդային Միության փլուզման տարիներին նա եղել է պետքարտուղարությունում Հայաստանի եւ Ադրբեջանի հարցերով զբաղվող պատասխանատու պաշտոնյա: Ավարտել է Ջորջթաուն համալսարանի արտաքին ծառայության ֆակուլտետը, ինչպես նաեւ Տեխասի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Միջազգային Անվտանգության հարցերի գծով Մագիստրոսի կոչում է ստացել Ազգային պաշտպանության համալսարանից:**

**Դիվանագիտական տարբեր պաշտոններ է զբաղեցրել Մալթայում, Փարիզում, Սանկտ Պետերբուրգում, Դուբլինում եւ այլուր:**

# Հոկտեմբերի 1-ից Արցախում ուղեվարձը կթանկանա

**Հոկտեմբերի 1-ից Արցախում հասարակական տրանսպորտի ուղեվարձի սակագինը կփոխվի ու նախկին 70 դրամի փոխարեն քաղաքացիները կվճարեն 100 դրամ: Սա արժանացել է ուղեւորափոխադրում իրականացնող ընկերությունների գոհունակությանն ու քաղաքացիների դժգոհությանը: Քաղաքացիները դժգոհում են, որ աշխատավարձը նույնն է, աշխատատեղերը՝ քիչ, մինչդեռ վարձերն անընդհատ բարձրանում են: «Այստեղ մթերքը, սնունդը շատ ավելի թանկ է, քան Երեւանում, սակայն աշխատավարձն ավելի ցածր է: Սա սոցիալական լուրջ հարված է հատկապես միջին եկամուտ ունեցող ընտանիքների համար, որոնք հասարակությունում մեծամասնություն են կազմում»,- «Ազգ»-ի հետ զրույցում ասաց Ստեփանակերտի բնակչուհի տիկին Անահիդան՝ հավելելով, որ նոր որոշումից բոլորն էլ դժգոհ են:**

**«Ուղեվարձի սակագնի բարձրացումը կբերի սպասարկման նոր որակի»,- հավաստիացնում է «Ստեփանակերտ սերվիս» ՓԲԸ տնօրեն Լեւոն Չալյանը՝ հավելելով, որ վերջին անգամ ուղեվարձը թանկացել է յոթ տարի առաջ՝ 50 դրամից դառնալով 70: Այս յոթ տարիների ընթացքում մի քանի անգամ թանկացել են վառելիքը, պահեստաքսուքային նյութերը եւ, ըստ նրա, այժմ իրենք վնասով են աշխատում:**

**Նրա խոսքերով, նույն սակագնով այլեւս անհնար է փոխադրում իրականացնել եւ ստացված գումարով չի լինում ո՛չ նորմալ սպասարկել, ո՛չ էլ վարորդների աշխատավարձը տալ: Ստեփանակերտի քաղաքապետարանից էլ նշում են, որ վառելիքի թանկանալուն զուգահեռ ուղեւորահոսքն էլ քիչ է եւ դա է պատճառը, որ ընկերություններն աշխատում են վնասով: Չալյանի ներկայացմամբ, Ստեփանակերտում տրանսպորտն աշխատում է մինչեւ ժամը 24-ը եւ ուշ ժամերին ուղեւորներ գրեթե չկան:**

**Հ. Հ.**

# Մեր քաղաքական վերնախավին արժեզրկող երկու ամառ

⇨1

Անցնող ամառվա ընթացքում ցանցային մեդիայի ստեղծած արհեստական, հորինածին իրականությանն ու հերոսներին մի պահ փոխարինեցին ռեալ իրականությունն ու ռեալ հերոսները՝ ի դեմս երկրին բազկի զորությունն ու կյանքը տված մեր զինվորների:

Օգոստոսի սկզբին «Ադրբեջան եւ ընկ.» հրահրած բլից-քրիգը մեծ հակահարված ստացավ հայկական կողմից, շփոթ բաժին հանելով ոչ միայն բերանը բացուխուփ անող եւ հոդաբաշխ բացատրություն չարտաբերող «Ադրբեջան եւ ընկ.»-ին, այլեւ՝ այսպես կոչված հայկական քաղաքական էլիտային, ով միանգամից ոչ ակտուալ դարձավ, ու մինչ գլխի կընկներ իրեն գցել սահման՝ դիրքերի ֆոնին նկարվելու, բանը բանից անցել էր. հասարակությունը ցույց էր տվել բանակի թիկունքին կանգնելու անսպասելի հաստատակամություն, իսկ օրվա հրամանատարությունն անցել էր սահմանին հրաշքներ գործող հայ զինվորին նախ, ապա եւ՝ Սեյրան Օհանյանին, ստվերելով ասֆալտի քաղաքական գործիչներին: Օհանյանն այլեւս գործոն է՝ ուզեն, թե չուզեն մեր գործարար-քաղաքականները, նրա հետ գուցե ստիպված կլինեն արդեն հաշվի նստել նաեւ քաղաքական որոշումներ կայացնելիս: Ասենք՝ Արցախ խաղաղարարներ մտցնելու դեմ հայտարարությունը Օհանյանն էր անում ու ոչ թե այլ պաշտոնյա, սա այլեւս փոխել չի լինի, իսկ դա ամենից կարեւոր քաղաքական հայտարարությունն էր օգոստոսի առաջին կեսին, երբ նախագահների Սոչիի հանդիպումից առաջ: Ու այս խորապատկերում հանկարծ ու պարզվեց՝ մեր պատգամավորները, պաշտոնյաները սահմանում նկարվելու մանկությունից չբավարարված սեր ունեն, ու քանի որ բանակ չեն գնացել, որ դիրքերում նկար ունենան, էս լարված պահին գլխապատառ իրենց գցեցին սահման ու մի մրցակցություն էր՝ դիրքում ով ավելի լավ նկար կունենա: Կամ՝ սկսեցին հանկարծ մտահոգվել սահմանամերձ գյուղի բնակիչների կյանքով՝ մինչեւ հիմա էլ կարծես չգիտեին, որ սահմանի գյուղացին արտոնության կարիք ունի, սահմանային համայնքի կարգավիճակի կարիք ունի: Աբսուրդ է, չէ՞, պատգամավորները հիմա նախաձեռնում են սահմանային համայնքին սահմանային համայնքի կարգավիճակ տալու նախագիծ: Ոնց որ ասես՝ խնձորի անունը խնձոր է: Բա էս քսան տարի ինչ էիք անում, թե՞ սահման ու սահմանի համայնք մինչեւ հիմա չունեինք:

Դուրս ու ներսից բոլորն էին փորձում օգտվել սահմանային իրավիճակից՝ Պուտինը նախաձեռնություն էր խլում՝ Սարգսյան-Ալիեւ հանդիպեցնելու, ԱՄՆ-ից ու Ֆրանսիայի դեսպանատնից հնչում էին ձայներ՝ թե իրենք զենք չեն վաճառում Ադրբեջանին, Հայաստանին բան էին հասկացնում, բայց էֆեկտը փոքր էր: Հարկ եղավ սահմանային լարվածության հետ կապված սովորաբար հնչող երկուստեք հավասարապես դատապարտումների պարիտետը խախտել անգամ, թե՝ Ադրբեջանն է մեղավոր սահմանային միջադեպերի համար: Դե, ԱՄՆ-ին էլ կարելի է հասկանալ. Ուորլիքը ճղվի, Օլանդն իրեն կոտորի՝ հանդիպեցնելու թեմայով, բայց Պուտինը հանդիպի ու հանդիպեցնի (թեեւ՝ զրո արդյունքով, ցուցափեղկ ընդամենը), անարդար է ի վերջո:

Դե իսկ «փլուզում», գազատարի «վթար», Հայաստան մտնող ճանապարհների պայթեցում անցած իննսունականներին տեսածներիս չես զարմացնի էս նոր «փլուզումներով» ու Վերին Լարսի ճանապարհի փակմամբ, դրանք գործիքներ են, որոնք մեր հանդեպ միշտ կիրառում են տարբեր ժամանակներում եւ զանազան հարցեր լուծելիս: Մանավանդ՝ զուգահեռաբար հայտնի է դարձել, որ Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցելու հարցը լուծվելու է (եթե, իհարկե, լուծվի) հոկտեմբերի 10-ին: Ու մնում է Հայաստանի արտադրանքը ռուսական կամ եվրասիական անծայրածիր շուկա արտահանելով երկիր զարգացնելու հույս ունեցողներին հարցնել՝ եթե Վրաստանն այլ տնտեսական տարածքում է, որտեղից փորձում են Ռուսաստանին պատժել, զրկելով եվրոպական ապրանքներից, ու մեր՝ ռուսական շուկա դուրս գալու միակ ճանապարհը Վրաստանով է անցնում, մեր հույսերը քանի՞ տոկոսանոց են, ու արդյո՞ք ռոմանտիզմի տարրերով չեն շաղախված դրանք: Վերին Լարսի ճամփին օրեր կանգնած ու փչացած գյուղատնտեսական արտադրանքը՝ փաստ:

Վերադառնալով մեր խորհրդարանական քառյակի օրակարգի երկրորդ կարգի թարմությանը, նշենք որ այստեղ անհամաձայնությունների նոր թեմա կա՝ սահմանադրական փոփոխությունների հետ կապված:

Ընդհանրապես՝ եթե մամուլը չկարդաս, չես իմանա, որ երկրին սահմանադրական փոփոխություններ են պետք, ու միայն դրանց ընդունմամբ, ախ, համակարգային փոփոխություններ կլինեն: Այսինքն՝ որ սահմանադրությունը փոխենք, Լֆիկներն ու մյուսները ստվերից դուրս կգան, ու վարչապետը, ով էլ որ նա լինի, լրագրողներին չի ասի, որ միանգամից բոլորին ստվերից դուրս բերել հնարավոր չէ: Պարզվում է՝ քառյակի ներքին հակադրություններից մեկը հենց այս փոփոխությունների հետ կապված տարաձայնություններն են թելադրում. ՀՅԴ-ն կողմ է փոփոխություններին ու խորհրդարանական համակարգի անցնելուն, մյուսները, այդ թվում հատկապես քառյակի դոմինանտ համարվող ԲՀԿ-ն, գտնում են, որ այս պահին դրա ժամանակը չէ, չնայած՝ այս բոլորը տեսական խոսակցություն է, դեռ սահմանադրական փոփոխությունների նախագիծ սեղանին չկա: Բայց դա չի խանգարում քառյակին տարաձայնություններ ունենալ այս թեմայով: Իսկ ո՞վ անկեղծ չէ, եւ ո՞վ է ուզում իշխանության հետ իշխանություն կիսել, սա բացահայտելու համար շատ ժամանակ պետք չի լինի. ասացին՝ Հայաստանի ԵՏՄ-ին անդամակցության ճակատագիրը կորոշվի հոկտեմբերի 10-ին, Մինսկի վեհաժողովում, ու հենց այս ամսաթվին են սպասելու, վստահ եմ, մեր քառագլուխ ընդդիմադիրները, ըստ այդմ վերադասավորելու համար իրենց ուժերն ու մինչ այս անորոշ տեսակետները: Կամ որ՝ ԲՀԿ-ն եւ ՀՅԴ-ն ուզում են դիմել ՍԴ՝ կենսաթոշակային ոլորտի նոր օրենքը վիճարկելու, մյուս երկուսը՝ «Ժառանգությունն» ու ՀԱԿ-ը, դա ժամանակի անիմաստ կորուստ են համարում, սա էլ մյուս տարակարծությունը. որովհետեւ ԵՏՄ-ին անդամակցելուց հետո համակարգը միեւնույն է վերանայվելու է՞, թե՞ որովհետեւ վարչապետը նաեւ ԲՀԿ-ի ցանկալի մարդն է, իսկ նա հանձն է առել կենսաթոշակային բարեփոխումները՝ կուսակայինով հանդերձ:

Ճիշտն ասած՝ մեզ համար զարմանալի երկար ձգվեց ընդդիմադիրների՝ քառագլուխ ֆորմատով ընդդիմադիրություն անելը: Ընդհանրապես՝ խորհրդարանական ու նախագահական ընտրություններից հետո մեր ընդդիմադիրները միայն այն են անում, որ խաբս են տալիս՝ տարբեր թղթեր դեմ անելով հանրությանը, տարբեր պահանջներ ներկայացնելով ու կեղծ հույսերով կերակրելով իրենց կյանքը փոխել ցանկացողներին: Ավելի ազնիվ կլինի, որ որպես համակարգի մասն, նրանք, կամ նրանց մեծ մասը (ասենք՝ ԲՀԿ-ն եւ ՀՅԴ-ն), ստանձնեն տարբեր պաշտոններ, ազնվորեն ներկայանան որպես իշխանության թեւ եւ դաշտն ազատեն՝ այն թողնելով իրական փոփոխություններ ցանկացող նոր խմբերի ու մարդկանց : Թե չէ՝ այս մղձավանջը, քառյակ անունով, դեռ երկար կլցնի ոչ իր տարածքը ու մարդկանց կզրկի իրենց երկրում ապագա ունենալու հույսից ավելի հաջողությամբ, քան դա անում են իշխանավորների չհաջողված առանձնյակները:

Քառյակի տարաձայնությունները խոսելու, թեժից գլուխ ազատելու մի թեմա՝ դեռ մոտակա օրերին ու ԱԺ առաջին նիստերին կձգի: Մյուս թեման մոտակա օրերի համար՝ Կալիֆոռնիայի սենատի կողմից ԼՂՀ անկախության եւ նրա ժողովրդի ինքնորոշման ճանաչման որոշումն է՝ տասից տասին խփելու թեմա իսկական: Հետո էլ՝ Մոսկվան ի գիտություն ընդունել է Եվրասիական միությանն անդամակցելու Հայաստանի պայմանագիրը, Հայաստանը դեռ մտածում է դժվար կետերի մասին, ու Մեդվեդեւը սեպտեմբերի առաջին տասնօրյակում կգա, կասի իր ասելիքը: Սա էլ խոսելու թեմա, ու էլ կձգի մինչեւ հոկտեմբերի տասը, որպեսզի ըստ էության որեւէ վճռորոշ բան անելու պատասխանատվություն չստանձնի քառագագաթ կոնգլոմերատը: Իսկ դե Ադրբեջանի ռազմատենչ հռետորաբանությունն ու անխելք արարքները սահմանին մշտապես խոսելու թեմա են: Այնպես որ քառյակը, ինչպես , ի դեպ, եւ իշխանական քաղաքական էլիտան, մինչեւ հոկտեմբերի 10-ն անելիք կգտնեն: Դժվարը հետո է լինելու՝ ե՛ւ Հայաստանի մտնելու, ե՛ւ չմտնելու պարագայում: Բայց սա հետո վերլուծելու նյութ է:

Իսկ ընդհանրապես՝ ազգովին նոր «կուտ էինք կերել» ու լուրջ-լուրջ քննարկում էինք՝ Թուրքիայի նախագահը կգա՞ Ցեղասպանության հարյուրամյակին Երեւան՝ արձագանքելով նախագահ Սարգսյանի հրավերին, թե՞ չի գա: Էրդողանը, է, որ առիթ-անառիթ արձանագրությունները կապում էր ղարաբաղյան կարգավորման հետ եւ ժխտելով ժխտում Հայոց ցեղասպանությունը, եւ վերջին շրջանի Թուրքիո ղեկավարներից ամենաագրեսիվն է հայկական խնդիրների հետ կապված: Է, «ջհանդամին» գա, բա դրա եկածն ու խոսածը մեզ պե՞տք են: Զուգահեռ վերջին թոփ թեման էր՝ թե Նալբանդյանը կմասնակցի՞ Էրդողանի երդման արարողությանը, թե չէ. ու կհանձնի՞ Էրդողանին նախագահ Սարգսյանի՝ 2015-ի ապրիլի քսանչորսին Հայաստան այցելելու գրավոր հրավերը: Տակից ուրիշ բան դուրս չգա՞ : Մանավանդ մեր դաշնակից Ֆրանսիայի արտգործնախարարը, պատասխանելով «Եվրոպա եւ Արեւելք» հանդեսի խմբագիր Վարուժան Սիրապյանին, հայտարարում է, որ Թուրքիան Ֆրանսիայի դաշնակիցն է: Ռուսներն էլ կավ դաշնակցություն են անում Թուրքիայի հետ: Էլ ո՞վ մնաց:

AZG NEW SHABAT 1.QXD 28/08/2014 22:31 Page 3



ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Ի՞նչն է մտնում 1,5 մլրդ դոլար արտահանման մեջ

## *14 տարում Հայաստանից արտահանումն ավելացել է 5 անգամ*

*90-ականներին Հայաստանից գրեթե ոչինչ չէր արտահանվում, բացառությամբ սեփականաշնորհած ձեռնարկությունների հաստոցների ու սարքավորումների, որոնք այդ տարիների իշխանությունների լուռ համաձայնությամբ կամ գուցե նաեւ աջակցությամբ, դուրս էին բերվում երկրից եւ վաճառվում մետաղի ջարդոնի գնով: Խորհրդային Հայաստանի արդյունաբերական հսկաները, օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով, դադարեցին գործել: Արդյունաբերական երկրի համբավ ունեցող Հայաստանը, որի արտադրանքը հիմնականում սպառվում էր Խորհրդային Միությունով մեկ, դարձավ ճգնաժամային եւ այսօրվա խոսքերով ասած՝ հումանիտար աղետի մեջ հայտնված երկիր: Երկիր, որտեղ անգամ միրգն ու բանջարեղենը, կաթնամթերքը եւ սննդամթերքի շատ տեսակներ գրեթե ամբողջությամբ ներմուծվում էին:*

*Մինչդեռ, ակնհայտ է, որ այնպիսի փոքր շուկա եւ պահանջարկ ունեցող երկիր, ինչպիսին Հայաստանն է, չի կարող զարգանալ առանց արտահանման մեծ ծավալներ ունենալու: 2000-ականներից սկսած Հայաստանի ավերված տնտեսության վերականգնմանը զուգահեռ, արտահանման տեմպերը տարեց տարի ավելացան, ինչը փաստում են արձանագրված ցուցանիշները:*

### Հայաստանյան արտահանման առաջատար քառյակը

Ազգային վիճակագրական ցուցանիշների համաձայն, 2013-ին Հայաստանից արտահանումը կազմել է մոտ 1 մլրդ 480 մլն դոլար: Համեմատության համար նշենք, որ 2000-ին Հայաստանից արտահանվել էր ընդամենը 300 մլն դոլարի արտադրանք: **Այսինքն, անցած 14 տարիների ընթացքում Հայաստանից արտահանումն ավելացել է մոտ 5 անգամ:** Փոխվել է նաեւ արտահանման կառուցվածքը, ավելացել է պատրաստի արտադրանքի արտահանումը:

Ներկայումս արտահանվող ապրանքների գերակշիռ մեծամասնությունը զբաղեցնում են 4 հիմնական ապրանքային խմբեր: **Ամենամեծ տեղը զբաղեցնում է հանքահումքային արտադրանքը՝ 407 մլն դոլար:** Խոսքը պղնձի, մոլիբդենի եւ այլ մետաղական հանքանյութերի արտահանման մասին է, որոնք վաճառվում են եվրոպական բորսաներում:

Հաջորդը պատրաստի սննդի արտադրանքն է՝ 310 մլն դոլար: Հիշեցնենք, որ 15 տարի առաջ այս ճյուղը գրեթե չկար, քայքայվել էր եւ միայն 90-ականների վերջերից սկսեց գործել, վերագործարկվեցին բազմաթիվ եղած ձեռնարկություններ, ստեղծվեցին նորերը: Շատ կարճ ժամանակահատվածում **հայկական սննդարդյունաբերությունը հետ գրավեց ներքին շուկայում՝ Հայաստանում իր կորցրած դիրքերը, իսկ այսօր դարձել է արտահանման մեջ երկրորդ տեսակարար կշիռ ունեցող ճյուղը**:

Մոտ 309 մլն դոլարի ոչ թանկարժեք մետաղներ եւ դրանցից պատրաստված իրեր (սեւ մետաղներ եւ դրանցից պատրաստված արտադրանք, պղինձ եւ արտադրանք պղնձից, ալյումին եւ արտադրանք ալյումինից, այլ ոչ թանկ. մետաղներ, մետաղակերամիկա եւ արտադրանք դրանցից) են արտահանվել Հայաստանից: **Այստեղ նույնպես սկսել են ավելանալ պատրաստի արտադրանքի ծավալները:**

Թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ եւ դրանցից իրերի (ոսկերչական, ադամանդագործական արտադրանք եւ այլն) արտահանումը 2013-ին կազմել է 187 մլն դոլար: Նշենք, որ **ադամանդագործական արտադրանքի արտահանումը 8-10 տարի առաջ շատ ավելի մեծ ծավալներ էր զբաղեցնում եւ երկրորդն էր հանքահումքային արտադրանքից հետո:** Սակայն այս ճյուղը անկում ունեցավ միջազգային շուկայում ադամանդի գների նվազման հետեւանքով, ու թեեւ վերջին տարիներին որոշակիորեն վերականգնել է իր դիրքերը, բայց դրանք չեն հասել նախկին ծավալներին: Փոխարենը ավելացել են ոսկերչական արտադրանքի ծավալները, նպաստելով այս ապրանքախմբի արտահանման ծավալների աճին:

**Այսպիսով, 1,5 մլրդ դոլար արտահանման ընդհանուր ծավալներից, վերոնշյալ 4 ապրանքախմբերի արտահանումը միասին վերցրած կազմում է մոտ 1,2 մլրդ դոլար:** Իսկ մնացա՞ծը:

### Արտահանման երկրորդ «շարասյունը»

Արտահանվող խոշոր ապրանքախմբերին հաջորդում են գյուղմթերքներն ու թեթեւ արդյունաբերական արտադրանքը: **Գյուղմթերքների՝ «բուսական ծագման արտադրանք» կոչվող ապրանքախմբի արտահանումը 2013-ին կազմել է մոտ 42 մլն դոլար**՝ 45766 տոննա ընդհանուր քաշով: Խոսքն, այստեղ առավելապես թարմ մրգերի եւ բանջարեղենի մասին է:

Թեթեւ արդյունաբերական արտադրանքի կամ, ինչպես նշվում է, մանածագործական իրերի արտահանման ծավալներն անցյալ տարի կազմել են 38,6 մլն դոլար: **Դրանք հիմնականում տղամարդու եւ կանացի վերարկուներն են՝ տաք, կիսաբաճկոն, անձրեւանոց**, **ինչպես նաեւ բամբակից, տրիկոտաժից, սինթետիկ եւ այլ գործվածքները:** Խորհրդային տարիների թեթեւ արդյունաբերության մաս համարվող կոշիկի արտահանման հսկայական ծավալները մնացել են անցյալում: Այնուամենայնիվ, այստեղ որոշ աշխուժացում կա՝ մոտ 2 մլն դոլարի կոշկեղեն է արտահանվել անցյալ տարի: Այս ճյուղը մեծ հեռանկարներ ունի ինչպես տեղական շուկայում ավելի մեծ ծավալներ զբաղեցնելու, այնպես էլ արտահանման ավելացման առումով: Ընդ որում, այս ոլորտում վերջին տարիների լուրջ ներդրումներ են կատարվել, թողարկելով տեղական արտադրության բրենդային դարձած կոշիկներ:

50240 տոննա՝ 25 մլն դոլար արժողությամբ արտահանում ունեցել է «իրեր քարից, գիպսից, ցեմենտից» ապրանքախումբը: Այստեղ հիմնական արտահանվող ապրանքը եղել է ապակին եւ ապակուց պատրաստված արտադրանքը՝ տարաներ, շշեր եւ այլն:

«Մեքենաներ, սարքավորումներ եւ մեխանիզմներ» (հաստոցներ, զոդման, եռակցման սարքեր, շոգեկաթսաներ, գեներատորներ, մարտկոցներ, կուտակիչներ, շարժիչներ, պոմպեր, բեռնիչներ, կենցաղային սարքավորումներ եւ այլն) եւ «սարքեր եւ ապարատներ» (ժամացույցներ ամեն տեսակի եւ դրանց մասեր, օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, չափիչ, վերահսկիչ, ճշգրիտ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր) ապրանքախմբերից յուրաքանչյուրում արտահանման ծավալները կազմել են 20,8 մլն-ական դոլար:

**Ընդհանուր առմամբ 41-42 մլն դոլարի արտահանումը այս երկու ճյուղերից աննշան ցուցանիշ է, եթե նկատի ունենանք, որ խորհրդային տարիներին մեքենաշինական եւ սարքաշինական արդյունաբերությունը մեր տնտեսության հզորագույն ճյուղն էր:** Համաձայն 1985 թվականի տվյալների, Հայաստանի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում մեքենաշինությունն (էլեկտրատեխնիկա, հաստոցաշինություն, գործիքաշինություն, սարքաշինություն, ավտոմոբիլաշինություն) ուներ ամենամեծ բաժինը՝ 30,3 տոկոս, իսկ արտադրանքն գրեթե ամբողջությամբ արտահանվում էր Հայաստանից: Ցավոք, արդյունաբերական հզորությունը խորհրդանշող հենց այս ճյուղն էլ ամենամեծ կորուստն ունեցավ 90-ականներին, ինչի արդյունքում ճյուղի ավելի քան 150 ձեռնարկություններից, ներկայումս, մասնակի հզորություններով գործում է հազիվ 10-15-ը:

Այս ճյուղի նախկին հզորության հասնելու մասին, բնականաբար, անիմաստ է մտածել: Միաժամանակ ուրախալի է, որ արտահանման որոշակի ծավալներ այստեղ առկա են: Նշենք նաեւ, որ ժամացույցների արտադրությունը եւ ճշգրիտ սարքաշինությունն ընդգրկված են կառավարության «Արտահանման վրա հիմնված արդյունաբերության զարգացման ռազմավարության» մեջ:

### 10-20 մլն դոլար արտահանում ունեցող ճյուղերը

10-20 մլն դոլար արտահանման ծավալներ ունեցող ապրանքներն են՝ ձուկ (թարմ կամ սառեցված)՝ մոտ 17 մլն դոլար, քիմիայի եւ դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ 16 մլն դոլար, պլաստմասսա եւ դրանցից իրեր, կաուչուկ եւ ռետինե իրեր՝ 11,6 մլն դոլար:

Հետաքրքրական են ձկան արտահանման տվյալները: Դատելով այս ոլորտի տնտեսվարողների աղմուկ-աղաղակից, որ բարձրացվում է նրանց կողմից արտեզյան ջրերի գիշատչային շահագործման դեմ արվող քայլերի կապակցությամբ, տպավորություն է ստեղծվում, թե Հայաստանի արտահանման փրկությունը ձկնարդյունաբերության մեջ է:

**Մինչդեռ, իրականում խոսքն ընդամենը 17 մլն դոլարի՝ կամ արտահանման մոտ 1 տոկոսի մասին է:** Եթե սա համեմատենք թեկուզ 42 մլն դոլար գյուղմթերքների արտահանման ծավալների հետ, ավելացնելով այն վնասը, որ ձկնաբուծարանները պատճառում են գյուղատնտեսությանն ու գյուղացիական տնտեսություններին, ապա պարզ է դառնում, որ **ձկնարդյունաբերության զարգացումը հատկապես Արարատյան դաշտում ոչ մի հեռանկար եւ անհրաժեշտություն չունի:** Ավելին, այն ուղղակի սպառնալիք է մեր ջրային պաշարներին եւ այս առումով՝ երկրի անվտանգությանը, ինչին առիթ ունեցել ենք անդրադառնալու: («Հայաստանի ստորերկրյա ջրերի վիճակը տագնապալի է», «**Ազգ**», 25.07.2014):

**Քիմիական արդյունաբերության արտադրանքի, պլաստմասսա եւ դրանցից իրեր, կաուչուկ եւ ռետինե իրերի մասին խոսելով նույնպես հարկ է նշել, որ դրանք Հայաստանի երբեմնի զարգացած քիմիական արդյունաբերության փշրանքներն են:** Այստեղ նույնպես արտահանման ավելացման լուրջ ներուժ կա: Եթե այս ոլորտի երկու հսկաները՝ «Նաիրիտն» ու «Վանաձորի քիմիական կոմբինատը» գործարկվեն եւ կայուն շահագործվեն, ապա թե արտահանման, թե աշխատատեղերի ավելացման լուրջ ակնկալիքներ կունենանք: Սակայն, առայժմ անլուծելի է այս ընկերությունների համար լուրջ ներդրողներ գտնելու խնդիրը:

Ամփոփելով հայաստանյան արտահանման պատկերը, նշենք, որ մնացած մի քանի այլ ճյուղեր ունեն արտահանման փոքր ծավալներ եւ նրանցից յուրաքանչյուրն առանձին վերցրած որեւէ ազդեցություն չի թողնում արտահանման ընդհանուր կառուցվածքի եւ ծավալների ցուցանիշների վրա:

---

# Ախտորոշում

**Տարիներ առաջ ամերիկյան ոչ հայտնի համալսարաններից մեկում պրոֆեսոր Ադամ Հերիֆիլդը ապագա բժիշկ ուսանողների համար իր դասախոսությունը սկսեց հետեւյալ նախադասությամբ. «Չնայած մարդկանց մեծամասնությունը հիվանդ է, բայց մարդկանց մեծամասնությունը որեւէ հիվանդություն չունի»: Այս նախադասությունից հետո պրոֆեսորը դադար վերցրեց ու շարունակեց. «...Նրանց ուղղակի թվում է, որ իրենք հիվանդ են. իսկ դա արդեն հիվանդություն է»:**

**Հետո, Հերֆիլդն, անշուշտ, շարունակեց իր դասախոսությունը, խոսելով կենտրոնական նյարդային համակարգի, մարդու հիմնական, կենսական նշանակություն ունեցող օրգանների մասին, բայց դա արդեն կարեւոր չէ՝ այս պարագայում: Կարեւորն այն է, որ մեզ՝ մեր իսկ մասին հաճախ թվում է մի բան, ինչն իրականում այդպես չէ: Այլ կերպ ասած՝ մարդկանց մեծամասնությունը տառապում է (հենց տառապում է) խնդիր հորինելով ու այդ խնդրից տանջվելով: Չգիտեմ այս հիվանդության ճիշտ անվանումը, բայց վստահ եմ, որ սա հիվանդություն է: Ընդ որում, հաճախ, այդ մտացածին խնդիրները չեն վերաբերում հենց մեր առողջությանը, ավելի շատ դրանք առնչվում են մարդկային սովորական փոխհարաբերություններին: Օրինակ, երբ գյուղից քաղաք՝ որդու տուն եկած ծնողներին, երեխայով զբաղված հարսը մոռանում է գոնե սուրճ առաջարկել, ծնողները հեռանում են՝ վստահությամբ, որ, «ուրեմն մեր հարսը մեզ չի ցանկանում ընդունել, հյուրասիրել. էլ չենք գա»: Կամ, երբ ամուսնացած աղջիկը՝ սկեսուրի ու սկեսրայրի ներկայությամբ սեփական մորը դիմում է ոչ թե «մամ ջան», այլ ուղղակի՝ «մամ», վերջինս հասկանում է, որ ուրեմն՝ «աղջիկս սառել է իմ հանդեպ»: Սրանք սովորական, կենցաղային մանր խնդիրներ կլինեին, եթե հետեւանք չունենային, ընդ որում՝ արդեն իսկ մարդու կյանքին ու առողջությանը սպառնացող հետեւանք: Խնդիր ստեղծած մարդը կարող է այնքան հավատալ «խնդրին», այն դարձնել իր համար բացարձակ ճշմարտություն, որից էլ ստանալ արդեն իրական հիվանդություններ:**

**Սա՝ եթե մանրացնենք հարցը: Ավելի գլոբալ առումով մենք ազգովին տառապում ենք դժբախտության սինդրոմով: Այսինքն իրականում մենք դժբախտ կոչվելու իրական հիմքեր չունենք, մեր դժբախտ լինելն ուղղակի մեզ թվում է, բայց մենք այդ մասին ոչինչ չգիտենք, չենք էլ ուզում իմանալ, քանի որ՝ անքննելի է, որ «դժբախտ ենք»: Մինչդեռ, համաշխարհային վիճակագրությունը փաստում է, որ եթե մենք, մեզանից յուրաքանչյուրը հնարավորություն ունի աղոթելու այնտեղ, որտեղ ավանդաբար աղոթում է՝ առանց վախենալու, որ մեզ կարող են ծեծել, կամ սպանել, ուրեմն մենք, մեզանից յուրաքանչյուրը աշխարհի 3 միլիարդ բնակիչներից երջանիկ է, քանի որ վերջիններս այդ հնարավորությունը չունեն: Եթե մենք, յուրաքանչյուրը մեզանից իր տան սառնարանում ունի թեկուզ միայն մեկ ուտելիք, պահարանում՝ թեկուզ միայն մեկ հագուստ, վայր՝ որտեղ կարող է գիշերել, ուրեմն մենք, յուրաքանչյուրը մեզանից ավելի հարուստ է, քան աշխարհի ողջ բնակչության 75 տոկոսը: Իսկ, եթե մեզանից յուրաքանչյուրը ունի սեփական բանկային հաշվեհամարը, դրամապանակում թեկուզ չնչին գումար, ուրեմն աշխարհի 100 բնակիչների միջեւ 8 ամենաերջանիկներից մեկն ենք:**

**Իհարկե պետք է այս մասին հաճախ մտածել, մանավանդ, երբ մենք, մեզանից յուրաքանչյուրը վստահ է, որ ինքը հիվանդ է:**

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Ի՞նչն է խանգարում Հայաստանում բացել Հարվարդի կամ Սորբոնի համալսարանների մասնաճյուղերը

## Փոխանակ փնթփնթալու Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան համալսարանի մասնաճյուղի բացման կապակցությամբ

Երեւանում բացվելու է Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղը: Նման համաձայնություն արդեն կայացրել են երկու երկրները, որը հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Թե ի՞նչ նշանակություն ունի վերոնշյալ համալսարանը խորհրդային շրջանում ապրածների համար, երեւի հարկ չկա բացատրելու: Այսօրվա բնորոշումներով, այն խորհրդային երկրի «պաշտամունքային» բուհն էր, Մոսկվայի «էլիտար» միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտից հետո իհարկե: Հետխորհրդային տարիներին նույնպես Լոմոնոսովի անվան պետհամալսարանն իր գրավչությունը չի կորցրել: Համենայնդեպս, այն միջազգային բարձր վարկանիշ ունի եւ այստեղ մասնաճյուղ բացելու դեպքում կդառնա Հայաստանում գործող ամենահայտնի բուհերից միակը:

Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան համալսարանը ներառում է 9 գիտահետազոտական ինստիտուտ, 40 ֆակուլտետ, ավելի քան 300 ամբիոն, ունի մի շարք արտասահմանյան մասնաճյուղեր, այստեղ սովորում է 32,5 հազար ուսանող, 4,5 հազար ասպիրանտ, դոկտորանտ, հայցորդ, ավելի քան 10 հազար ունկնդիր, աշխատում է ավելի քան 4 հազար դասախոս, 5 հազար գիտական աշխատակից:

Տեղեկացնենք, որ այս պահին Հայաստանում գործում են եւս 3 օտարերկրյա համալսարաններ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանը, Հայաստանում ֆրանսիական համալսարանը եւ Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանը: Դրանք բոլորն էլ մասնավոր համալսարաններ են եւ հայտնի միայն մեր երկրում:

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) հիմնվել է 1991-ին Երեւանում: 2013-ից ունի նաեւ բակալավրիատի ծրագիր: Կրթությունը անգլերենով է: Հայաստանում ֆրանսիական համալսարանը 1995-ին, կրթությունը ֆրանսերենով է: Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանը հիմնադրվել է 1997-ին, ուսուցումը ռուսերենով է:

Վերոնշյալ երեք համալսարանների բացումը Հայաստանում ողջունվեց բոլորի կողմից: Այս բուհերը կայացան եւ գտան իրենց տեղը մեր բուհական համակարգում: Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի բացման մասին նորությունը նույնպես Հայաստանի հանրային կարծիքի կողմից դրական ընդունվեց: Ի վերջո, երկիր է մուտք գործելու հանրաճանաչ բուհ՝ կրթական բարձր չափորոշիչներով, ավանդույթներով եւ ընդգրկվածությամբ:

Սակայն, ինչպես հաճախ է պատահում վերջերս, որոշակի նեղ շրջանակներ նեղսրտել են այս հեռանկարից: Նրանց չի հետաքրքրում այս բուհի վարկանիշը կամ կրթական մակարդակը, նրանց հուզում է, որ դա ռուսաստանյան բուհ է: Իսկ քանի որ նրանք Արեւմուտքից դրամաշնորհներ են ստանում միայն նրա համար, որ անառարկելիորեն կատարեն այն, ինչ հրահանգում են իրենց ֆինանսավորողները, ապա նման մոտեցումը զարմանալի համարել չի կարելի: Նույն մարդիկ դժգոհում էին Հայաստանի՝ Մաքսային միություն ընդունվելու մասին որոշումից եւ միաժամանակ այսպես կոչված գազային պայմանագրից, որի շնորհիվ Հայաստանի համար պահպանվում էր ռուսական գազի ցածր գինը:

Մի խոսքով, այս անգամ եւս գործել է «գրանտակերների» տրամաբանությունը, որն է՝ ամբոխավարություն եւ տրամաբանության բացակայություն, եթե օտարերկրյա «տերերի» շահերը պաշտպանելու մասին է խոսքը: Իսկ թե ինչո՞ւ նույն Արեւմուտքը չի ցանկանում իր հանրահայտ, օրինակ՝ Հարվարդի կամ Սորբոնի համալսարանների մասնաճյուղերը բացել Հայաստանում, փոխանակ խանգարելու, երբ Ռուսաստանն է դա անում, մնում է միայն ենթադրել: Ամեն դեպքում, միջազգային ճանաչում ունեցող մեկ բուհ կսկսի գործել Հայաստանում, եւ դա միանշանակ դրական իրադարձություն է, հակառակ վերջին ժամանակներում ակտիվացած ջուր պղտորողների մարազմատիկ փնթփնթոցների:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

# Լրատվության ծուռ հայելի

Երբ Հայաստանը անկախություն ձեռք բերեց, սփյուռքահայ մի շարք կազմակերպություններ եւ փորձառու լրագրողներ Երեւան փոխադրվեցին «ազատագրելու» խորհրդային ոճի լրատվությունն իր անհամ ձեւաչափից եւ վերականգնելու նրա իսկական առաքելությունը: Թերթերը, ռադիոն եւ հեռուստահաղորդումները մեծապես բարելավեցին իրենց թղթարկումները, լուրերը հավաքելու, ներկայացնելու եւ մանավանդ ազատ մեկնաբանելու ձեւերը: Դրանով սփյուռքահայերը իրենց հայրենասիրական լուման ներդրեցին հայրենիքում:

Բայց, զուգահեռաբար, հզոր պետությունները իրենց իրացման շուկաները ներկրեցին Հայաստան, որպեսզի հետապնդեն իրենց քաղաքական շահերը:

Մինչ հայկական կազմակերպությունների կողմից հիմնված եւ գործող թերթերը անընդհատ նյութական դժվարությունների առաջ են կանգնած եւ տուժում են որակապես, արտասահմանյան ֆինանսավորմամբ ստեղծված լրատվամիջոցները ծաղկում են եւ հրատարակվում արհեստավարժ ձեւով: Ջորջ Օրուելի «Մեծ եղբայրը» ամենուր, այդ թվում նաեւ Հայաստանում, ներկա է, եւ իր գործն է առաջ տանում:

Բաց հասարակություն հիմնադրամը, Ազատություն ռադիոկայանը եւ այլ գործակալություններ ազատորեն գործում են Հայաստանում եւ առողջ դատողությունը հուշում է մեզ, որ նրանք բոլորովին էլ չեն մտահոգվում հայ ժողովրդի բարեկեցությամբ կամ էլ Հայաստանի առաջ ծառացած խնդիրներով: Նրանք աշխատանքի են վերցրել արհեստավարժ լրագրողների եւ մեկնաբանների, որոնք հնչեցնում են իրենց տերերի շեփորները:

«Բաց հասարակության ֆոնդը» (ԲՀՖ) (*), օրինակ, կարող է ձեւացնել, որ ժողովրդավարության առաջխաղացմանն է նպաստում Եվրոպայում եւ երրորդ աշխարհի երկրներում, սակայն, ի վերջո, նա հետապնդում է ավելի մեծ քաղաքական նպատակներ: ԲՀՖ-ն մտահղացումն էր միլիարդատեր Ջորջ Սորոսի, ով փախչելով բռնապետության դաժանություններից Հունգարիայում, հանգրվանեց Մ. Նահանգներում եւ հարստացավ այնտեղ: Բուշ-Չեյնի վարչակազմի օրերին նա բացահայտորեն քննադատեց Մ. Նահանգների արտաքին քաղաքականությունը: Բայց միաժամանակ նրա կազմակերպությունը մարզեց եւ Ուկրաինա ու Վրաստան (վստահաբար նաեւ աշխարհի այլ վայրեր) ուղարկեց որոշակի թվով երիտասարդների, որպեսզի իրականացնեին նարնջագույն եւ վարդագույն հեղափոխությունները, մի սխրագործություն, որ Մ. Նահանգների ռազմական իշխանությունը այդքան հեշտությամբ չէր կարող իրագործել:

Իհարկե պրն. Սորոսը իրավունք ունի իր փողերը ծախսելու եւ իր գաղափարները տարածելու աշխարհով մեկ, սակայն նա իրավունք չունի խաղալու ճակատագրի հետ հայ ժողովրդի, որն այդքան շատ է տառապել իր պատմության ընթացքում հզոր տերությունների մրցակցություններից:

Նման գործակալությունների լրագրողներն ու մեկնաբանները կարող է գտնվեն եւ գործեն Երեւանում եւ Ղարաբաղում, սակայն նրանց ղեկավարող ուղեղը գտնվում է Պրահայում կամ Վաշինգտոնում գործող հեռակառավարման վահանակներում: Վերահսկվող լրատվամիջոցը առանձին, մեկուսացված չի գործում, եւ ինչպիսի բարձր ու վեհ գաղափարներ ձգտի հետապնդել, միեւնույն է, նա անբաժան մասն է կազմում ինչ-որ մի հզոր ուժի համընդհանուր մարտավարության: Մենք կարող ենք հեշտությամբ առնչություն հաստատել այն «լավ-յուղոտված» բոլոր կրոնական աղանդների հետ, որոնք կրծող կենդանիների նման Հայաստանի հասարակության մեջ են ներթափանցում քայքայելու եւ ապակողմնորոշելու նպատակով: Ամենանենգ ու դավաճանական արարքը երիտասարդների ուղեղների լվացումն է, որպեսզի զենք չկրեն, այն դեպքում, երբ Հայաստանը, ոչ իր ընտրությամբ, պատերազմի մեջ է ներգրավված իր հարեւանների հետ:

Կովկասում Հայաստանի անվտանգությունը ՆԱՏՕ-ի նպատակներին ծառայեցնելու եւ առուծախի առարկա դարձնելու ցայտուն օրինակ կարող է հանդիսանալ «Բաց հասարակության ֆոնդի» կողմից ֆինանսավորվող «Iragir.am» կայքում տեղադրված բազմաթիվ հոդվածներից մեկը, որի վերնագիրն է «Աշխարհաքաղաքական լուրջ հեռանկար Ջավախքի համար»: Հեղինակը աչքի ընկնող քաղաքական մեկնաբան Հակոբ Բադալյանն է:

Ջավախքը հայաբնակ շրջան է Վրաստանում: Պատմականորեն այն մեկ հայերի, մեկ վրացիների ձեռքն է անցել: Ներկայիս շրջանի կեսից ավելին հայերով է բնակեցված: Ախալցխայում եւ Նինոցմինդայում համապատասխանաբար հայերի թիվը հասնում է 94.3 եւ 95.8 տոկոսի: Շրջանը դիտավորյալ վատ էր կառավարվում եւ տնտեսական հուսահատ վիճակում էր հայտնված Թբիլիսիի իշխանությունների կողմից, որպեսզի հայերը ստիպված լինեին հեռանալու այնտեղից: Մինչեւ 2007 թիվը Ախալքալաքում էր տեղակայված ռուսական զինվորական բազան, որը շրջանի հայ բնակչությանը աշխատանքով էր ապահովում եւ հոգում նրա անվտանգությունը: Սակայն, Մոսկվան հապճեպ, նախքան պայմանագրի ավարտը, դուրս բերեց այնտեղից իր բազան՝ հայերին թողնելով Վրաստանի կառավարության քմահաճ վերաբերմունքի փաստի առաջ: Թբիլիսիի ոտնձգությունները եւ Ռուսաստանի անորոշ քայլը, որոշ առումով, բավարարեցին Վրաստանի կառավարության նպատակները: Հուսահատ հայերը Ռուսաստան մեկնեցին աշխատանք եւ ապահովություն որոնելու նպատակով: Ռուսաստանը պատերազմեց Վրաստանի դեմ Հարավային Օսիային եւ Աբխազիային անկախություն ձեռք բերելու համար, մինչդեռ Ջավախքի եւ Աջարիայի ճակատագրերը մնացին Թբիլիսիի կառավարության ձեռքերում: Նախագահ Սաակաշվիլին բանտարկել տվեց մարդու իրավունքների պաշտպան եւ ակտիվիստ Վահագն Չախալյանին եւ վարեց այնպիսի քաղաքականություն, որ վրացերենը չյուրացնելու քողի ներքո ստիպեց հայերին կամ հեռանալ տարածաշրջանից, կամ էլ ձուլվել:

Հակառակ իշխանության փոփոխության, Թբիլիսիի նոր կառավարությունը ձգտում է եթե ոչ անդամակցել, ապա առնվազն ապահովել ՆԱՏՕ-ի ներկայությունն իր երկրում: Հայերն արդեն «վայելել են օգուտները» թուրքական սահմանում ունենալով ՆԱՏՕ-ի անդամ մի երկիր: Այժմ վերոնշյալ լրագրողը ողջունում է ՆԱՏՕ-ի մի նոր բազայի ստեղծումը հենց Ջավախքում, հայաբնակ այդ շրջանում: Նա գրում է. «ՆԱՏՕ-ն կարող է ինքնին օժտել ոչ անդամ երկրների հետ գործակցության նոր գործիքներով՝ Ուկրաինայի, Վրաստանի եւ Մոլդովայի համար: Իսկ դա կարող է նշանակել, որ Հյուսիս-ատլանտյան դաշինքը կստանա Վրաստանի անդամ չլինելու պարագայում այնտեղ լրջորեն ներկայացված լինելու հնարավորություն կամ հեռանկար: Այդ իմաստով, Ախալքալաքում Վրաստանի ռազմակայանը ստրատեգիական նշանակություն կստանա, քանի որ գտնվում է թե Հայաստանում ռուսական ռազմակայանին մոտ, թե մի տարածքում, որտեղ հավանական է դիտվում Ռուսաստանի սադրանքը Վրաստանի հասցեին, թե Արցախի հակամարտության գոտում, որը տարածաշրջանի ապակայունացման հավանական օջախներից է»:

Նախ նշենք, որ Հարավային Ռուսաստանի ամենախոցելի հատվածում ՆԱՏՕ-ի միջամտությունը կամ ներկայությունը ամենավրդովեցուցիչ սադրանքն է: Եվ հետո, լրագրողին պետք է հիշեցնել, որ նույնիսկ Վաշինգտոնը մեղադրեց Սաակաշվիլուն 2008ի պատերազմը սանձազերծելու համար: Իր անհեռատես եզրակացության մեջ լրագրողը ցնծագին ողջունում է ՆԱՏՕ-ի ընդարձակումը, որպես «հավասարակշռող գործոն» հենց այն ժամանակ, երբ Վրաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի պաշտպանության նախարարները հանդիպում են Նախիջեւանում ծրագրելու պատերազմական խաղեր եւ մոգոնելու հնարքներն է՛լ ավելի սեղմելու օղակը Հայաստանի շուրջը:

Հոդվածի եզրակացությունն ավելի անհեթեթ է, քան ամբողջ հոդվածը: Եզրակացության մեջ նա նշում է. «Հետաքրքիր կլինի հետեւել, թե Ախալքալաքում Վրաստանի ռազմակայանի ստեղծման գործընթացը ինչ արձագանքներ է ունենալու Ռուսաստանում, Ջավախքում եւ նաեւ Հայաստանում, ովքեր են սկսելու տորպեդահարել Հայաստանի, Արցախի ու Ջավախքի անվտանգության համար տարածաշրջանային հավասարակշռության կարեւոր հեռանկար պարունակող այդ գործընթացը եւ ինչ շեշտադրումներով»:

Ներկայացված գաղափարը համահունչ է Ղարաբաղում ամերիկյան խաղաղապահ ուժեր տեղակայելու Ջեյմս Ուորլիքի վերջերս կատարած հայտարարությանը եւ կարծես ամբողջացնում է այն:

Վիրավորանքին անարգանք ավելացնելով ԲՀՖ-ն կեղծ բարեպաշտությամբ իր վրայից գցում է պատասխանատվությունը՝ նշելով, որ հոդվածում արտահայտված գաղափարներն ու մեկնաբանությունները հեղինակի անձնական խոհերն են եւ չեն ներկայացնում ԲՀՖ-Հայաստանի կամ նրա վարչության կարծիքը: Երբ ԲՀՖ-ն է վճարում լրագրողների աշխատավարձն ու հոնորարները, առնվազն անազնիվ է նման հայտարարություններ անելը:

Հակոբ Բադալյանը լավ որակավորում ունեցող լրագրող է եւ առավել արժանապատիվ աշխատանքի է արժանի, քան լրատվության ծուռ հայելու միջոցով ՆԱՏՕ-ի «ապրանքների մանրավաճառությամբ» զբաղվելը:

(* Ճշգրիտ՝ «Բաց հասարակության հիմնադրամներ- Հայաստան»:

Դետրոյթ, ԱՄՆ
Թարգմ. Հ.Ծ.

# Փակ Լարսի բացած «Տանտալոսը»

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հայաստանից Ռուսաստան տանող ցամաքային միակ ուղին անցնում է Վրաստանով՝ Վերին Լարսի անցակետով, որի գոյությունը Ռուսաստանում ապաստան գտած կամ բնակություն հաստատած հայերի, նաեւ հայաստանյան գործարար աշխարհի համար բացառիկ նշանակություն ունի: Այդ բացառիկության պատճառով էլ ամեն անգամ, երբ ինչ-որ բան է տեղի ունենում ռազմա-վրացական ճանապարհին կամ թեկուզ Վրաստանում, որ կարող է վտանգել երթեւեկությունն այդ ուղղությամբ, մարդկանց գրեթե հուսահատության է հասցնում:

Օգոստոսի 20-ին Դարյալի կիրճում, որտեղով անցնում է Լարսի ճանապարհը, փլուզում տեղի ունեցավ անցակետից մեկ կիլոմետր հեռավորության վրա՝ սողանքի հետեւանքով: Մի սողանք էլ տեղի էր ունեցել դեռեւս մայիսին, ու դրանից հետո նոր սողանքի հավանականության մասին հայտարարվեց օգոստոսի 15-ին, երբ Լարսի ճանապարհը ժամանակավորապես փակվեց՝ զուտ անվտանգության նկատառումներից ելնելով:

Հիմա այդ ճանապարհը փակ է: Վնասվել էր նաեւ դեպի Հայաստան գազատարը, ճիշտ այնպես, ինչպես դա տեղի ունեցավ մայիսին, սակայն վերականգնվեց արդեն օգոստոսի 23-ին:

Դեռեւս օգոստոսի 21-ին Վրաստանի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլին այցելեց Դարյալի կիրճ ու հայտարարեց, թե ճանապարհը կվերականգնվի երկու շաբաթվա ընթացքում: Վերջին օրերի դրությամբ, այդ երկու շաբաթը դեռ ուժի մեջ է, ընդ որում՝ հաշված արդեն օգոստոսի 28-ից:

Ամեն դեպքում, արվում է հնարավորը, որպեսզի ճանապարհը դառնա երթեւեկելի, եւ վերջին տեղեկություններով՝ դեռեւս երկու կիլոմետր ճանապարհ է անհրաժեշտ մաքրել փլուզման հետեւանքներից: Այսինքն՝ իրատեսական չէ անգամ երկշաբաթյա ժամկետը:

Գործարար մտադրությունների, արտահանման ու ընդհանրապես գործնական երթեւեկի համատեքստում Լարսի փակ լինելը ռուսաստանյան շուկայի հետ գնալով ավելի մեծ հույս կապող հայ գործարարների համար ուղղակի անլուծելի խնդիր է. այլ կերպ, քան Լարսի ճանապարհով, գյուղմթերք ու այլ ապրանքներ Ռուսաստան չես արտահանի, քանի որ թանկ ճանապարհն այդ ապրանքներն անիրացվելի կդարձնի: Մի խոսքով՝ վնասներ, վնասներ, վնասներ...

Ուղեւորափոխադրության առումով էլ վնասները թեեւ մեկտեղված չեն, բայց խփում են բոլորի գրպանին: Լարսով երթեւեկելու մտադրություն ունեցող բոլոր երկրների քաղաքացիներին կամաց-կամաց առաջարկում են այլ տարբերակներով հասնել ուր ցանկանում են, այսինքն՝Հայաստանի բնակիչներն ու հյուրերը, որոնք ժամանել են ցամաքային ճանապարհով, պետք է իրենց գլխի ճարը տեսնելու ուղիներ փնտրեն:

Կոնկրետ՝ հայերի համար, որոնք նախապես պետք է օգտվեին Դարյալի կիրճով անցնող ռազմա-վրացական ճանապարհից, առանձնակի շատ տարբերակներ էլ չկան:



Եթե մեկնելու համար պետք է օգտվեին էժան ցամաքային տրանսպորտից, ապա ներկա դրությամբ կա՛մ պետք է սպասեն անորոշ ժամանակով, կա՛մ ինքնաթիռի տոմս գնեն: Այս տարբերակը բնավ էլ հարմար ելք չէ, քանի որ անգամ փոքր-ինչ էժանացած ավիատոմսերի պարագայում ցամաքային տրանսպորտի գների համեմատությամբ դեռեւս ինքնաթիռը մնում է թանկ հաճույք: Հատկապես, երբ մեկնելու անհրաժեշտություն ունի, ասենք, որեւէ ընտանիք, երբ անհրաժեշտ է ոչ թե մեկ, այլ 4-5 տոմս գնել ինքնաթիռով տեղ հասնելու համար:

Նրանք, ովքեր Հայաստանում են հայտնվել իրենց սեփական մեքենաներով, իսկ այդպիսիք մեծաթիվ են, դժվար թե կարող են ավտոմեքենաներն էլ տանել ինքնաթիռով: Կրկին մնում է կամ նստել թախտին, սպասել Լարսին, կամ գրեթե շուրջերկրյա ճանապարհորդություն իրականացնել՝ Հայաստանից Ռուսաստան հասնելու համար:

Նախ մնում է հասնել Վրաստանի սեւծովյան ափ ու այնտեղ փորձել անցնել ռուսաստանյան կողմը: Սակայն խնդիրն այն է, որ Վրաստանի Փոթիի նավահանգստից ռուսաստանյան սեւծովյան ափ հասնող լաստանավը մի երկար ժամանակով արդեն իսկ հասանելի չէ. ազատ տեղեր չկան: Այսինքն՝ այս հնարավորությունը, որը եւս էժան հաճույքների շարքից չէ, գրեթե բացառվում է:

Մեկ այլ տարբերակ էլ, որ, օրինակ, ծանոթ երեք ընտանիք ընտրել է ու արդեն իրականացնելու փուլում հայտնվել, Վրաստանի տարածքով հասնելն է Թուրքիայի Տրապիզոն քաղաք, որտեղից էլ լաստանավ նստել ու Իլյիչեւսկ հասնելն է: Մինչեւ Տրապիզոն արդեն իսկ հարյուրավոր կիլոմետրեր պետք է հաղթահարել, երկու սահման անցնել, վրաց-թուրքական սահմանին էլ դեռ մուտքի արտոնագրեր ու մեքենայի ապահովագրություն անել, այդքան վառելիք վատնել, հասնել Տրապիզոն, լաստանավում տեղավորվել ու երկար նավարկությունից հետո հասնել Իլյիչեւսկ:

Եվ այս ամենը ընտանիքով, երեխաների հետ, Հայաստան այցելությունից հետո, երբ անհրաժեշտ է վերադառնալ օրվա հացի խնդիրները լուծելու անհրաժեշտության թելադրանքին: Այս ուղին, որ ֆանտաստիկ ու անիրական է թվում, գործնականում ընտրել են մարդիկ, ովքեր չեն կարող նստել թախտին ու սպասել, թե երբ բախտը կամ մեկ ուրիշ ուժ կմաքրի Լարսի ճանապարհը: Ընտրել են, ու մի քանի օր ճանապարհ են գնալու. այլընտրանք չկա:

Մի խոսքով՝ հերթական անգամ Հայաստանը փակ Լարսի պատճառով հայտնվել է տանտալոսում, տառապանքներն են հայաստանցիներին: Իսկ թե ինչու այս իրավիճակն այդպես էլ չի փոխվում, կարելի է բացատրել հայ-վրացական հարաբերությունների այն երկնագույն-եթերային վիճակով, որի պարագայում կողմերը ջան ասում, ջան լսում են՝ պաշտոնական հանդիպումներում, իսկ սովորական իրավիճակներում Վրաստանում հայատյացությունը կարծես մարելու ոչ մի միտում չունի:

Դարյալի կիրճում փլուզման օրերին ներկայացուցչական պատվիրակությամբ Հայաստանում էր Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի հրավերով պաշտոնական այցով օգոստոսի 21-22-ը Ղարիբաշվիլին այցելեց Հայաստան, հանդիպեց Հայաստանի նախագահին, ԱԺ նախագահին, վարչապետին, եղավ Ծիծեռնակաբերդում եւ Մատենադարանում: Այցի առաջին օրն էլ, արդեն Թբիլիսիում, Վրաստանում Հայաստանի նորանշանակ դեսպան Յուրի Վարդանյանը հավատարմագրերը հանձնեց Վրաստանի նախագահին:

Լարսի ճանապարհի վերականգնման հետ կապված հենց Հայաստանում վարչապետ Հովիկ Աբրահամյանը առաջարկեց աջակցել վրացական կողմին, քաղաքավարի մերժեցին: Բայց համաձայնեցին նոր կամուրջ կառուցել բագրատաշենի անցակետում, անունն էլ դնել «Բարեկամության կամուրջ»: Քննարկեցին մի փունջ տնտեսական ու այլ հարցեր:

Լրահոսում այդպես էլ չերեւաց, թե արդյոք կողմերն անդրադարձել են Լարսին այլընտրանքային հնարավոր ճանապարհ ունենալու հեռանկարին, որպիսին կարող է լինել Աբխազիայով անցնող երկաթգիծը, քանի որ կախվածությունը միակ ու բացառիկ ճանապարհից ժամանակ առ ժամանակ կաթվածահար է անում ողջ Հայաստանը:

Այս հարցը կարող է ավելի խորանալ ու խնդրահարույց դառնալ, եթե հաշվի առնենք, որ ներկա դրությամբ Վրաստանն այլ ինտեգրման գործընթացներում է, ընդ որում՝ առաջանցիկ տեմպերով, Հայաստանն էլ այլ ուղի է բռնել՝ կարծես թե հոկտեմբերի 10-ին այդ ուղղությամբ փաստաթուղթ ստորագրելու հավանականությամբ: Հաղորդակցության ուղիները կդառնան էլ ավելի ցցուն կարեւորության, երբ Վրաստանում սկսեն գործել նորմատիվ այլ կարգեր, Հայաստանում՝ այլ:

Ամեն դեպքում, Լարսի խնդիրը մնում է, Վրաստանի ու Հայաստանի տարբեր պաշտոնյաներ հանդիպում են, հայտարարում, թե բոլորը Կովկասում պետք է ներգրավվեն տարածաշրջանային ծրագրերում, բայց Վրաստանին այդպես էլ ձեռնտու ու հարմար է մնում Հայաստանին պահել միակ ցամաքային ճանապարհից կախվածության մեջ, որն անցնում է Վրաստանով՝ ինչպես դեպի Ռուսաստան, այնպես էլ դեպի Թուրքիա:

# Վանանդ. երազելով ասֆալտի մասին

**Թեպետ գրեթե ամեն օր հեռուստատեսությամբ հնչում ու ամենատարբեր միջոցառումների ժամանակ կարեւորվում է սահմանամերձ գյուղերում կենսամակարդակի բարձրացումը, պայմանների ապահովումն ու կառավարությունը պատեհ-անպատեհ խոսում է սահմանամերձ բնակավայրերի կայացման եւ համաչափ զարգացման մասին, այնուամենայնիվ, խոսքը գործի այդպես էլ չի վերածվում: Հանրապետության բոլոր սահմանամերձ գյուղերն էլ գտնվում են սարսափելի վիճակում ու զրկված անգամ տարրական պայմաններից: Այդ գյուղերից մեկն էլ Վանանդն է:**

Էջմիածնից մեքենայով շուրջ մեկ ժամ ճանապարհ եւ հայտնվում ես սահմանամերձ Վանանդ գյուղում: Եթե հասել ես Վանանդ, ու մեքենան սարքին է, կոշիկներդ էլ մաշված չեն՝ նշանակում է, դու իսկական հաջողակ ես: Գյուղի փողոցներն այնքան փոշոտ են ու քարքարոտ, որ մի անզգույշ քայլ եւ կհայտնվես կա՛մ գետնին, կա՛մ ոտքդ կոլորես: Գյուղի փողոցները երբեք ասֆալտապատ չեն եղել: Վանանդում կատակով ասում են, որ Երեւանում մարդիկ զզվել են ասֆալտից, իսկ իրենք երազանքով են սպասում, թե երբ է շինտեխնիկան իրենց գյուղն էլ մտնելու, որ իրենք էլ քայլեն մաքուր ու ասֆալտապատ փողոցներով:

Մի քանի տարի առաջ գյուղապետը գյուղամիջյան ճանապարհներին գրունտային հող է լցրել: Ասում են՝ դա փրկել է գյուղացիներին աշնան անձրեւներին կամ ձյան տեղումներին գոնե չցեխոտվելուց, սակայն դա էլ մեղմ ասած լուծում չէ: Եթե վանանդցիները մի կերպ հարմարվում են այս իրավիճակին, ու իրենց խոսքերով, պայուսակում խոզանակ պահում, որ գյուղից դուրս գալիս հագուստի եւ կոշիկների վրայի փոշին սրբեն, դեպի Վանանդ գյուղ կենտրոնական ճանապարհի անհարմարություններին դիմակայելն ուղղակի անհնար է:

Սարդարապատի հուշակերտից դեպի Վանանդ գյուղ տանող ճանապարհի ութ կիլոմետր հատվածը քարուքանդ է, քարքարոտ ու դժվար երթեւեկելի: Փոսերը հսկայական են ու անհնար է մեքենան առանց ջարդելու տեղ հասնել:

Գյուղապետարանի բյուջեով ճանապարհի վերանորոգումն անհնար է: Համայնքային բյուջեն չի գերազանցում տասնյոթ միլիոն դրամն ու ըստ գյուղապետ **Ջիվան Մանուկյանի** այդ գումարը ծախսելու բազմաթիվ տեղեր կան: Նրա խոսքերով, մարզպետարանն ու կառավարությունն էլ մինչ օրս հարցը չեն լուծել, քանի կան առավել առաջնահերթ ու կենսական հարցեր: Թե որն է կենսական հարցը, գյուղապետը պատասխան չի գտնում: Նրա փոխարեն գյուղացիներն իրար հերթ չտալով պատմում են, թե ճանապարհների պատճառով քանի անգամ է վթար եղել ու քանի մեքենա է ջարդուխուրդ վիճակում հայտնվել ավտոտնակում:

«**Ազգ**»-ի հետ զրույցում վանանդցի **Գեւորգ Մանուկյանը** պատմում է, որ վատ ճանապարհների պատճառով երկրորդ մեքենան է փոխում: Ասում է՝ առաջին մեքենան այնպես էր վնասվել, որ անգամ հնարավոր չէր նորոգել եւ վաճառել: Մանուկյանը վստահ է՝ եթե ճանապարհները չվերանորոգվեն, երկրորդն էլ նույն ճակատագրին կարժանա: Մինչդեռ առանց մեքենայի, հողագործությամբ զբաղվող գյուղացին չի կարողանում բերքը հասցնել շուկա, մանավանդ, որ գյուղ մտնող ավտոբուս էլ չկա:

Քարուքանդ ուղին, որի մի հատվածը հանրապետական, մյուսը միջպետական նշանակության ճանապարհ է, նաեւ ազգային անվտանգության լուրջ խնդրի պատճառ է դառնում: Մի քանի տարի առաջ, երբ համագյուղացի տիկին Շողիկի առողջական վիճակը կտրուկ վատացել էր, շտապ օգնության մեքենան ուշացումով էր եկել. պատճառը քարուքանդ ճանապարհն էր: Ու թեպետ տիկնոջ կյանքը հաջողվել էր փրկել, սակայն հավանականությունը մեծ է, որ հաջորդ անգամ շտապ օգնության ուշացումը կարող է հանգեցնել ողբերգության: Գյուղացիները չեն բացառում, որ ծննդաբերության կամ սրտանոթային լուրջ սրացումների ժամանակ էլ, եթե անգամ շտապ օգնության մեքենան հասնի ճիշտ ժամանակին, ապա ութ կիլոմետր ճանապարհի խորդուբորդությունները հաղթահարելիս հիվանդի վիճակը կտրուկ կվատանա: Գյուղացիները պատմում են, որ շատ ժամանակ, շտապ օգնություն չեն էլ կանչում, վարորդներն անընդհատ դժգոհում են, բժիշկները՝ նույնպես: Հենց այդ պատճառով, հաճախ գյուղացիների մեքենաներով են հիվանդներին հասցնում մարզկենտրոն Արմավիր:

Գյուղացիները մտավախություն ունեն, որ գյուղում հրդեհ բռնկվելու պարագայում էլ Վանանդը կհայտնվի անօգնական փոքրիկի դերում: Վարորդները պատմում են, որ այլընտրանքային ճանապարհն էլ երկու անգամ ավելի երկար է, սակայն նրա վիճակն էլ է անմխիթար եւ վարորդներն անգամ վատի ու վատագույնի միջեւ ընտրություն կատարելու հնարավորություն չունեն:

«Էդ ճանապարհներին հրշեջ մեքենան դժվար կարողանա հասնել: Քանի րոպեի ճանապարհը արտասահմանյան մեքենաները քառասուն-հիսուն րոպեում են անցնում: Դուք պատկերացնո՞ւմ եք՝ էդ մեծ մեքենաները ոնց կգան: Մինչեւ ուշացումով տեղ հասնեն, գյուղը կրակի մեջ կկորի>>,- մտավախություն է հայտնում **տիկին Զեմֆիրան**՝ հավելելով, որ պատկան բոլոր մարմինները տեղյակ են խնդրից: Նրանց խոսքերով, խորհրդարանական վերջին ընտրությունների քարոզարշավի ժամանակ իրենց գյուղ է այցելել նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ու խոստացել, որ ճանապարհը կկառուցվի: Նախագահի խոստումից անցել է մի քանի տարի, սակայն գյուղի ճանապարհների հարցում փոփոխություն չկա: Փոփոխություն չկա նաեւ մարզպետարանի դիրքորոշման մեջ: «Փող չկա» մեր հարցին հակիրճ պատասխանեցին Արմավիրի մարզպետարանում՝ հավելելով, որ մարզպետը տեղյակ է, կառավարությունում՝ նույնպես, սակայն անհրաժեշտ ֆինանսը գտնել չեն կարողանում:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վանանդ-Երեւան

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Կրկին հոկտեմբերի 10. այս անգամ Մինսկում

Երբ գրվում էր այս հոդվածը, Ռեջեփ Թայիփ Էրդողանը դեռ ձեռքը չէր դրել թուրքական ոտտության սրբությունների կամ խորհրդանիշերի վրա ու չէր ստանձնել Թուրքիայի նախագահի պաշտոնը: Հիշեցնենք, որ օգոստոսի 28-ին Անկարայում տեղի ունեցավ Էրդողանի նախագահական երդմնակալությունը, որին մասնակցելու համար Հայաստանի պատվիրակությունը՝ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի ղեկավարությամբ մեկնել էր Թուրքիայի մայրաքաղաք:

Այս կապակցությամբ, հստակեցնելով, թե կոնկրետ ո՞ւմ գլխավորությամբ Հայաստանի պատվիրակությունը պետք է մեկնի Էրդողանի երդմնակալությանը, նախագահ Սերժ Սարգսյանը օգոստոսի 24-ին, մասնակցելով «Միասին-2014» համահայկական երիտասարդական ֆորումի վրանային ճամբարին եւ պատասխանելով մասնակիցների հարցերին, մասնավորաբար ասել էր. «Հայաստանի մասնակցությունը՝ Թուրքիայի նորընտիր նախագահի երդմնակալության արարողությանը հավանաբար տեղի կունենա արտգործնախարարի մակարդակով: Անկարայում Հայաստանի ԱԳ նախարարը կտեղեկանա նաեւ, թե արդյոք Թուրքիայի նախագահը պատրաստվո՞ւմ է Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցին՝ գալիք ապրիլի 24-ին այցելելու Ծիծեռնակաբերդ եւ սեփական աչքերով տեսնելու մարդկային հոծ երթը դեպի անմար կրակ, որ տասնամյակների ընթացքում միայն ավելանում է»:




Անշուշտ Անկարայում Հայաստանի պատվիրակությունը կարող էր գլխավորել ոչ թե նախարար Նալբանդյանը, այլ, ասենք, նրա տեղակալներից մեկը, ով նաեւ՝ «կտեղեկանար, թե արդյոք Թուրքիայի նախագահը պատրաստվո՞ւմ է Հայոց ցեղասպանության հարյուրերորդ տարելիցին... այցելել Ծիծեռնակաբերդ», բայց հենց ԱԳ նախարարի մակարդակով պատվիրակության գործուղումը թերեւս վկայում է այն մասին, որ հայ-թուրքական հարաբերությունները Հայաստանի համար չեն դադարել մնալ պակաս կարեւոր, ինչը միանգամայն հասկանալի է: Ուշագրավ է նաեւ նախագահ Սարգսյանի ընդգծումը, որ Թուրքիայի նախագահը՝ գալիք ապրիլի 24-ին կարող է այցելել ոչ թե Հայաստան՝ ընդհանուր առմամբ, այլ հենց կոնկրետ Ծիծեռնակաբերդ: Այլ կերպ ասած, գալիք ապրիլին Երեւանում Թուրքիայի նախագահին սպասում են ոչ թե Բաղրամյան 26-ում, այլ հենց Ծիծեռնակաբերդում:

Սա, նկատենք, հայ-թուրքական հարաբերությունների նոր եւ բավականին ուշագրավ ուղղություն է. Հայաստանն այլեւս չի պատրաստվում Թուրքիայի նախագահի հետ՝ անկախ վերջինիս ով լինելուց, պարզապես ֆուտբոլ նայել, առավել եւս՝ խաղալ:

Բայց մեր երկրի եվրասիական ինտեգրացիոն գործընթացները կարող են հայ-թուրքական հարաբերությունների հետագա ընթացքի կարգավորմանը մասնակցություն ունենալուց զրկել Հայաստանին: Բոլորովին վերջերս՝ Մինսկում կայացած խորհրդաժողովի ժամանակ ամենաբարձր մակարդակով հայտարարվեց, որ Հայաստանի, ինչպես նաեւ Ղրղզստանի անդամակցության հարցը՝ Եվրասիական տնտեսական միությանը կորոշվի այս տարվա հոկտեմբերի 10-ին Մինսկում նախատեսված գագաթաժողովի ընթացքում: Ո՞վ է սա հայտարարել, իհարկե Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը, ինչո՞ւ հենց նա, Պուտինը կիմանա...

Մեզ համար, բացի հանգամանքից, որ ԵՏՄ-ին մեր երկրի անդամակցության վերաբերյալ գրեթե բոլոր հայտարարությունները հնչում են Նազարբաեւից, հասկանշական է նաեւ Մինսկի՝ ճակատագրական գագաթաժողովի օրը՝ հոկտեմբերի 10: Հիշեցնենք, հինգ տարի առաջ հենց այդ օրը շվեյցարական Ցյուրիխում նախաստորագրվեց հայ-թուրքական զույգ արձանագրությունները: Իհարկե քիչ է հավանական, որ Մինսկի գագաթաժողովի կազմակերպիչները ուշադիր զննել են օրացույցը՝ գագաթաժողովի անցկացման համար ընտրելով մի օր, որի հետ Երեւանում, մեղմ ասած, դառը հուշեր ունեն, բայց մեծ քաղաքականության մեջ պատահականություններ քիչ են լինում:

Օրինակ, հենց հոկտեմբերի 10-ին ստորագրելով ԵՏՄ-ին միանալու, եւ ինչպես Պուտինն ինքն է հայտարարել՝ «սեփական ինքնավարության մի մասը զիջելու» վերաբերյալ համաձայնագիրը, Հայաստանը հայ-թուրքական արձանագրությունների, առհասարակ երկու երկրերի հարաբերությունների կարգավորումը դուրս է հանում երկկողմ միջպետական հարաբերությունների տիրույթից՝ մտցնելով այն ԵՏՄ-Թուրքիա հարաբերությունների տիրույթ: Վտանգավո՞ր է սա, անշուշտ, թեկուզ միայն այն պատճառով, որ հայ-թուրքական կնճռոտ հարաբերությունների բարելավման վերահսկողությունից Երեւանն ամբողջությամբ լվանում է ձեռքերը, այն պարագայում, երբ ԵՏՄ այսօր անդամ բոլոր երեք երկրները լուրջ հույսեր են կապում Թուրքիան եւս իրենց միություն ներառելու, առնվազն այդ միությունով Անկարային հետաքրքրելու առումով:

Ուրեմն կարո՞ղ է արդյոք այս տարվա հոկտեմբերի 10-ը ազդարարել նոր հայ-թուրքական հարաբերությունների բարելավման (նախ հաստատման, անշուշտ) մեկնարկ, իհարկե կարող է, հատկապես, որ ԵՏՄ-ում Հայաստանի հարցով հիմնական զեկուցող, չգիտես ինչու, դարձել է Նազարբաեւը, ով առաքելություն ունի Միություն բերել հնարավորինս շատ թյուրքախոս երկրների:

Այնուամենայնիվ, եկող ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդում մենք Էրդողանին կսպասենք. Օբամայի ամենամյա ուղերձներն այլեւս արդիական չեն դրանց սպասելու համար:

# Ո՞րն է խնդիրը, եթե այն փողը չէ

Ամենեւին էլ ոչ բրիտանացի գիտնականները պարզել են, որ մասնագիտություններ կան, որոնց կրողները անգամ ամառային հանգստի պայմաններում շարունակում են մնալ իրենց մասնագիտության կրողը: Ասենք, եթե գերմանական բժշկական կլինիկայի առաջատար բժիշկը մեկնում է Պորտուգալիա՝ հանգստանալու, նա Ատլանտյան օվկիանոսի ափին էլ շարունակում է մնալ բժիշկ, կամ երբ New York Times-ի մեկնաբանը արձակուրդն անցկացնում է շվեյցարական Ալպերում, հազարավոր կիլոմետրեր բարձրության վրա էլ շարունակում է մնալ լրագրող:

Այս մասնագիտությունների թվում է նաեւ քաղաքականությունը: Օրինակ Մեծ Բրիտանիայի թագուհին, ինչպես տեղեկացնում են բաց աղբյուրները, իր ամառային հանգիստն անցկացնում է ավանդաբար Շոտլանդիայում: Այնտեղ գտնվող Բալմորալ ամրոցը թագավորական ընտանիքի համար գնել են թագուհի Վիկտորիան ու արքայազնը՝ Ալբերտը, դեռեւս 1852-ին: Հասկանալի է, որ թագուհի Եղիսաբեթը ամենեւին էլ պարտավորություն չի կրում իր արձակուրդն անցկացնել հատկապես Շոտլանդիայում, բայց հասկանալի է նաեւ, որ այս աշնանը Շոտլանդիան, Լոնդոնի համաձայնությամբ ի դեպ, պատրաստվում է անցկացնել Բրիտանիայից անկախանալու հանրաքվե...

Արձակուրդի ընթացքում քաղաքական գործիչ մնալու ցանկությունը հեռու չէ նաեւ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Քեմերոնից: Մասնավորաբար «Լոնդոնը զավթած ռուս օլիգարխներից» վարչապետն հեռացել ու իր տիկնոջ հետ հանգիստն անցկացրել է Պորտուգալիայի ամենահարավում գտնվող Ալգարվի ծովափնյա հանգստավայրում: Նույն վայրն իր հանգստի համար ընտրել է նաեւ ռուսաստանցի լրագրող Վլադիմիր Պոզները, ով հենց Ատլանտյան օվկիանոսի ափին գրած իր նոթերից մեկում ընդգծել է, թե՝ «Այստեղ ռուսներ չկան»: Չի բացառվում, որ այս հանգամանքն է հենց վճռորոշ դեր խաղացել վարչապետ Քեմերոնի համար՝ ընտրելու հանգիստն անցկացնելու համար իրեն հարմար վայր:

Այլ պատմություն է Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը: Վերջինս հազիվ թե քաղաքական շարժառիթներով ընտրած լինի իտալական՝ Հարավային Տիրոլ նահանգը, որը գտնվում է Ավստրիայի հետ սահմանին: Բայց Մերկելը Իտալիա է մեկնել ոչ միայն ակտիվ հանգստանալու, այլեւ՝ հանգիստ պայմաններում գրականություն ընթերցելու համար, մասնավորաբար Գերմանիայի կանցլերը իր հետ վերցրել է Ստալինի մասին պատմող 900 էջանոց մի գիրք: Սա այն պարագայում, երբ Արեւմուտքում ավելի ու ավելի շատ են զուգահեռներ անցակցնում Պուտինի ու Հիտլերի, Պուտինի ու Ստալինի միջեւ՝ ընդգծելով, որ պուտինյան Ռուսաստանը նմանվում է ստալինյան վարչակարգին:

Ի դեպ՝ նախագահ Պուտինի մամուլի քարտուղարությունից հայտնել են, որ Վլադիմիր Պուտինը այս տարի հրաժարվել է հանգստանալուց՝ «Նախագահն աշխատում է ծանրաբեռնված գրաֆիկով»: Այ այստեղ արդեն բրիտանացի (եւ ոչ միայն բրիտանացի) գիտնականները պարզել են, որ անկախ մասնագիտությունից մարդիկ ավելի լավ ու արդյունավետ աշխատում են միայն, երբ վայելում են տարեկան հանգստի համար իրենց հատկացված ժամանակահատվածը լիարժեքորեն...

Այս համապատկերում ուշագրավ է, որ իրենց ամառային հանգստից հրաժարվել են Հայաստանի կառավարության անդամներ՝ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանը, քաղաքաշինության նախարար Նարեկ Սարգսյանը: Գյուղատնտեսության նախարարությունից հայտնել են, թե նախարար Սերգո Կարապետյանն առհասարակ արձակուրդի չի մեկնում: Դեռեւս հանգստանալու որոշում չեն կայացրել պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ով, ինչպես տեղեկացրել է վերջինիս մամուլի քարտուղարը՝ «2-3 տարին մեկ անգամ է հանգստանում, այլ էլ՝ առավելագույնը մեկ շաբաթով», սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, իսկ էներգետիկայի նախարարությունից չնայած տեղեկացրել են, որ նախարար Երվանդ Զախարյանն այս տարի հանգստացել է, բայց չեն կոնկրետացրել, թե որտե՞ղ, տեսնես ինչո՞ւ, որ չնախանձե՞նք...

Ինչո՞վ է պայմանավորված կառավարության շուրջ մեկ չորրորդի չհանգստանալու որոշումը, դժվարանում ենք ասել, ինչո՞վ է պայմանավորված հանգամանքը, որ հայաստանցի պաշտոնյաների ու մեծահարուստների համար շարունակում է նախընտրելի հանգստավայր մնալ ամռանն էլ ավելի կիզիչ դարձող Դուբայը, եւս՝ դժվար է ասել:

Չի բացառվում, որ նրանց հետաքրքրությունները, նախընտրությունները, անգամ բնավորությունը սկզբունքորեն, արմատապես տարբերվում է արեւմտյան գործիչների հետաքրքրություններից, նախընտրություններից, անգամ բնավորություններից: Մասնավորաբար, հուսամ կհամաձայնեք, որ հայ բարձրաստիճան պաշտոնյաները, առավել եւս մեծահարուստները ավելի քիչ փող չունեն, քան, օրինակ, Գերմանիայի կանցլերը, կամ անգամ ԱՄՆ նախագահը, ով, ի դեպ, իր հանգիստն անցկացրել է Մասաչուսեթս նահանգում գտնվող Մարտաս-Վինյարդ գողտրիկ կղզում: Ընդ որում, սկզբում ԱՄՆ նախագահը կղզում եղել է իր տիկնոջ՝ Միշելի եւ Բո անունով շան հետ, հետո նոր նրանց միացել են երկու դստրիկները: Կարելի է ենթադրել, որ համաշխարհային քաղաքականությունը Բարաք Օբամային՝ ամենեւին անհրաժեշտ ռոմանտիկ լիցքերով չի ապահովում:

Մերոնք այլ կերպ են մտածում, ուրեմն ո՞րն է իսկապես խնդիրը, եթե այն փողը չէ, ոչ էլ, անշուշտ, Պուտինին նմանվելու անհագ ցանկությունը:

Հ. ԱՖՅԱՆ

**Հ.Գ.-** *Նախագահ Սերժ Սարգսյանը, ինչպես ավելի վաղ տեղեկացրել է նախագահականի մամուլի ծառայությունը, եւս այս տարի հանգստացել է՝ կարճատեւ, մեկ շաբաթով: Որտե՞ղ, այդ մասին աղբյուրը ոչինչ չի հաղորդել, ինչպես նաեւ այն մասին, թե ունի՞ արդյոք Հայաստանի նախագահը շուն:*

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
**քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու**

# Համազգային գաղափարը օրենքի տառում
# Ժողովրդի պայմանագիրն իշխանության հետ

«Սահմանադրությունը որպես անկախության եւ անբաժանելիության երաշխիք ամրապնդել է մեր համախմբումը եւ դարձել կայունության ու համերաշխության առանցք»:

*Նուրսուլթան Նազարբաեւ*

Օգոստոսի 30-ը Ղազախստանի համար նշանակալից ամսաթիվ է: Այդ օրը հանրապետության նույնիսկ ամենահեռավոր անկյուններում տոնում են ՂՀ Սահմանադրության օրը: 19 տարի առաջ Ղազախստանի ժողովուրդը կատարեց իր պատմական ընտրությունը եւ որոշեց հետագա ինքնուրույն զարգացման ուղիները: 1995թ. ընդունվեց երկրի առաջին Սահմանադրությունը, որը քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների երաշխավորն է: Որպես երկրի հիմնական օրենքի դրույթների անշեղ կատարման արդյունք, Ղազախստանը կարճ ժամանակահատվածում հաստատեց ամուր պետականություն եւ աներեր դարձրեց իր անկախությունը:

Այս տարիների ընթացքում Ղազախստանի Հանրապետության Սահմանադրությունը ստեղծել է պայմաններ հասարակության հաջող զարգացման համար: Երկրի հիմնական օրենքը հանդես է գալիս իբրեւ բոլոր ղազախստանցիների հավասար պայմանների եւ հնարավորությունների երաշխավոր՝ հաշվի առնելով բազմազգ ժողովրդի շահերը: Այդ պատճառով էլ Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության օրը երկրի գլխավոր պետական տոներից մեկն է, երբ ոչ միայն ղազախստանցիները, այլեւ ողջ աշխարհը ուշադրություն են դարձնում այդ երիտասարդ, բայց մեծ նկրտումներ ունեցող պետության հաջողություններին եւ նվաճումներին: Այսօր շնորհիվ հասարակության մեջ միասնության եւ համերաշխության, երկրում հաստատված է քաղաքական եւ տնտեսական կայունություն, ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների իրացման համար:

Այդ փաստաթղթի էջերում հստակ իրավաբանական լեզվով շարադրված են Հանրապետության բոլոր բնակիչների համար ընդհանուր արժեքները եւ հասկացությունները, ինչպիսիք են ղազախստանյան հողի անձեռնմխելիությունը եւ անբաժանելիությունը (որի վրա բարեկամաբար եւ համերաշխորեն ապրում են 140 էթնոսներ եւ 17 կրոնական համայնքներ), սեռական, ռասայական, ազգային, լեզվական, կրոնական եւ այլ հատկանիշներով քաղաքացիների խտրականության խստագույն արգելքը: Հենց Սահմանադրությունն է ամրագրել քաղաքական եւ գաղափարախոսական բազմազանությունը, երկրի տարածքային ամբողջականությունը, ժողովրդի իշխանության սկզբունքը, պետական խորհրդանիշները, մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, կառավարման նախագահական ձեւը, պետական իշխանության նոր համակարգը: Պետությունն այս բոլոր տարիներին քաղաքականություն է վարում այս սահմանադրական արժեքների լիարժեք իրագործման ուղղությամբ:

Մասնավորապես, դրա շնորհիվ, անկախ Ղազախստանի ավելի քան քսանամյա պատմության ընթացքում այդ հողի վրա չի եղել եւ ոչ մի քաղաքական ճգնաժամ: Բոլոր հարցերը խստագույնս լուծվել են միասնական պետական իշխանության ճյուղերի համագործակցության մասին սահմանադրական դրույթների հիման վրա: Սահմանադրությունը դարձել է հասարակության ժողովրդավարական ներուժի աճի ամուր հիմք:

Երկրի կարեւոր սահմանադրական մարմիններից մեկը՝ Ղազախստանի ժողովրդի Ասամբլեան, որը 9 պատգամավոր է պատվիրակում Խորհրդարան, լայնորեն ուսումնասիրվում է աշխարհում: 2012թ. Աստանան ընդունել է արդեն ավանդական դարձած համաշխարհային եւ ավանդական կրոնների առաջնորդների 4-րդ համագումարը, որի թեման էր «Խաղաղությունը եւ համերաշխությունն իբրեւ մարդկության ընտրություն»: Այդ համապատկերում չի կարելի չնշել լեզուների, մշակույթի վերածնության, ղազախստանյան հայրենասիրության դաստիարակման, ազգամիջյան համերաշխության ամրապնդման ուղղությամբ տարվող մեծ եւ բազմաբնույթ աշխատանքը, ավելի քան 200 էթնիկ դպրոցների եւ կիրակնօրյա լեզվական կենտրոնների գործունեությունը:


YURI KOCHETKOV / EPA

Բացի այդ, հիմնական օրենքն ամբողջ օրենսդրական հենքի կրող կառույցն է, որը կարգավորում է երկրի տնտեսական կյանքը: Ղազախստանը ԱՊՀ-ում առաջիններից մեկն է իրականացրել հարկային եւ կենսաթոշակային բարեփոխումներ, որոնք նմանը չունեն հետխորհրդային տարածքում: Ազգային տնտեսության մեջ ներգրավված են ավելի քան 100 մլրդ դոլար ուղղակի արտասահմանյան ներդրումներ: Միայն նոր 21-րդ դարի առաջին 7 տարվա ընթացքում կրկնապատկվել է ՀՆԱ-ի ծավալը, երկու անգամ ավելացել է արդյունաբերական արտադրանքի ծավալը եւ 1,5 անգամ գյուղատնտեսական արտադրանքինը: Թերեւս երկրի տնտեսական կյանքում ամենասպասվող իրադարձությունը «Էքսպո-2017» ցուցահանդեսն է, որը կանցնի «Ապագայի էներգիան» կարգախոսի ներքո: Նախագիծը խնդիր է դնում հետազոտել ռազմավարությունները, ծրագրերն ու տեխնոլոգիաները, որոնք ուղղված են էներգիայի կայուն աղբյուրների զարգացմանը, խթանել էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործումը եւ ցույց տալ այցելուներին էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման գործում ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը: Այդ ընթացքում արտասահմանյան եւ տեղական գիտնականները կներկայացնեն իրենց վերջին մշակումները կանաչ էկոնոմիկայի ոլորտում: Սպասվում է, որ ցուցահանդեսին կմասնակցեն ավելի քան 100 երկրներ: Պետության առաջնորդ Նուրսուլթան Նազարբաեւն ընդգծել է, որ «Էքսպո-2017» կդառնա լրացուցիչ խթան ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ երկրի տնտեսական եւ ենթակառուցվածքային զարգացման համար. **«Դա Ղազախստանի ամենամեծ նվաճումն է անկախության տարիների ընթացքում միջազգային տեսանկյունից: Դա կդառնա մեր երկրի համար շրջադարձային կետ: Մեր մայրաքաղաքում կներկայացվեն գիտության եւ տեխնիկայի լավագույն համաշխարհային նվաճումները: Բազմաթիվ ղազախստանցիներ սեփական աչքերով կկարողանան տեսնել ապագայի տնտեսությունը, որին մենք ձգտում ենք: Մեզ համար «Էքսպոն» պետք է դառնա մեգանախագիծ, որից օգուտ կստանա յուրաքանչյուր տարածաշրջան: Դա հզոր ազդանշան կտա երկրի ինովացիոն զարգացմանը»:**

Անկախության տարիներին Ղազախստանը ահռելի ճանապարհ է անցել ինչպես տնտեսական, այնպես էլ դիվանագիտական հարաբերությունների ոլորտում: Դիվանագիտական հարաբերություններ են հաստատված աշխարհի 138 պետությունների հետ: Արտասահմանյան պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հետ ակտիվ փոխգործակցության արդյունքն է ավելի քան 3 հազար միջպետական, միջկառավարական եւ միջգերատեսչական մակարդակների պայմանագրերի կնքումը:

Ելնելով այն բանից, որ ինտեգրումը ժամանակի կենսական պահանջն է եւ միայն համատեղ ուժերով ժամանակակից աշխարհում կարելի է արժանապատվորեն պատասխանել ժամանակի այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են ահաբեկչությունը, ծայրահեղականությունը եւ նարկոբիզնեսը, ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում համագործակցությունը Ղազախստանի արտաքին քաղաքականության առանցքային ուղղություններից մեկն է: Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի Մաքսային Միության ստեղծումը պետք է դիտարկել իբրեւ օրինաչափ քայլ ինտեգրման եւ Միասնական տնտեսական տարածքի կառուցման ճանապարհին:

Ղազախստանյան դիվանագիտության կարեւորագույն նվաճումն էր 2010թ. Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունում երկրի նախագահությունը: Պատմական նվաճում դարձավ նաեւ Աստանայում անցած ԵԱՀԿ պետությունների ղեկավարների գագաթաժողովը:

1992թ. մարտից սկսեցին ձեւավորվել Ղազախստանի եւ Եվրոպական Միության միջեւ փոխհարաբերությունները, երբ նախագահ Ն.Ա. Նազարբաեւն ընդունեց Եվրոպական համագործակցության հանձնաժողովի պատվիրակությանը: Այդ ժամանակներից սկսած երկիրը շահագրգռված է եվրոպական ներկայության (առաջին հերթին տնտեսական) մեծացմամբ: Ղազախստանի եւ ԵՄ միջեւ փոխշահավետ համագործակցության հիմքերը ձեւակերպված են «Գործընկերության եւ համագործակցության մասին» համաձայնագրում, որտեղ ամրագրված են քաղաքական, տնտեսական եւ մշակութային-հումանիտար համագործակցության իրավական հիմքերը:

Նազարբաեւի նախաձեռնությունը Ասիայում փոխգործակցության եւ վստահության միջոցների մասին խորհրդակցություն հրավիրելու մասին նույնպես գտել է հատուկ միջազգային ընդունելություն: Չէ՞ որ այն միավորում է 24 պետություններ, որոնք զբաղեցնում են Ասիայի տարածքի 90%-ը եւ որոնց բնակչությունը կազմում է ամբողջ մարդկության կեսը:

Բազմակողմ գործընկերության զարգացումը Շանհայի համագործակցության կազմակերպության շրջանակներում ՂՀ արտաքին քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկն է: Այսօրվա դրությամբ ՇՀԿ-ն հանդիսանում է եզակի բազմակողմ հարթակ Կենտրոնական Ասիայի երկրների եւ տարածաշրջանային առաջատար դերակատարների՝ Ռուսաստանի եւ Չինաստանի միջեւ երկխոսության զարգացման համար:

Իզուր չէ, որ 2011թ. Ղազախստանը նախագահում էր ՄԱԿ-ից հետո երկրորդ խոշորագույն կազմակերպությունում՝ Իսլամական Համագործակցության Կազմակերպությունում: Անկախության նվաճման պահից սկսած երկիրն ընտրել է մուսուլմանական համաշխարհային համայնքի հետ կոմպլեքսային եւ գործընկերային կապերի հաստատման ուղեգիծ:

Այս ամենին հնարավոր չէր հասնել առանց միասնական իրավական պլատֆորմի, որպիսին է դարձել Ղազախստանի Սահմանադրությունը: Այդ կենտրոնական փաստաթղթի հենքի վրա է Հանրապետությունը կառուցում ժողովրդավարական, իրավական, աշխարհիկ եւ սոցիալական պետություն, որտեղ հաջողությամբ գոյակցում են ավելի քան 100 ազգություններ, կրոնական կազմակերպություններ եւ հարանվանություններ: Ղազախստանցիների միասնությունը երկրի դեպի առաջ ընթանալու անգնահատելի առհավատչյան է: Իբրեւ արդյունք՝ ղազախստանցիների 92%-ը երկրում ազգամիջյան մթնոլորտը գնահատում են իբրեւ բարեհաջող:

# Նամակ մշտարթուն հայ զինվորին

*«Դու այն բանակն ես, որի զինվորը նահանջ չգիտե»*

*(Համո Սահյան)*

Դու հին ես, ինչպես բիբլիական լեռն Արարատ:

Դու, հայ զինվոր (սպա, գեներալ, մարշալ), ականատեսն ու վկան ես աղեղնավոր Հայկ Նահապետի, որի նետից ընկավ Բելը եւ Հայոց աշխարհի բախտի ծառը ծաղկեց իր հողի վրա: Դու հաղթեցիր մարերին ու սելեւկյաններին եւ հայոց նորաստեղծ պետության հիմքերը ցեմենտեցիր: Քո Արտաշես Առաջին եւ Տիգրան Մեծ թագավոր զորավարները փոքրաթիվ ուժերով բազում հաղթանակներ տարան գերակշիռ ուժերով թշնամյաց դեմ եւ ծովից ծով Հայաստան ստեղծեցին՝ դառնալով արքայից արքա: Շուրջ մեկ դար (95 տարի) նրանք Հայաստանը դարձրին հին աշխարհի հզորագույն պետություններից մեկը: Վարդան, Վասակ, Մուշեղ, Մամիկոնյան զորավարների առաջնորդությամբ պարսիկների դեմ բազում կռիվներում քո ազգայինը, հավատն ու դավանանքը, խաչը պաշտպանեցիր, զինվոր: Հետո քեզ վրա նորից ու նորից եկան հռոմեացիները, արաբները, թաթար-մոնղոլները, սելջուկները, թուրքե՜րը, թուրքե՜րը, թուրքե՜րը...

Եկան, ավերեցին քո ճարտարած շեներն ու քաղաքները, սրի քաշեցին բնակչությանը: Բայց դու, խիզախ հայ զինվոր, նորից ոտքի կանգնեցիր, զորաբանակ ստեղծեցիր եւ կռիվ տալով, հավատ ու դավանանք պահելով հասար նոր հաղթանակների, նորից ու նորից կառուցեցիր, ճարտարեցիր, Շամիրամից ու Կլեոպատրայից մինչեւ քեմալականները նախանձ շարժեցիր հանդեպ քո դրախտային երկիրը: Մեր ժողովրդի համար ամենաաղետավորը եղավ անցյալ դարի սկիզբը. 1915-ին թուրքերը ցեղասպանության ենթարկեցին մեկուկես միլիոն հայի, մնացածներին էլ տեղահանեցին: Հույս առաքող Սեւրի պայմանագիր ստորագրվեց ի շահ Հայաստանի, բայց այս անգամ էլ գերանն արխային տեղից կոտրվեց:

Մեր դեմ եղավ Լենինը: Քեմալ Աթաթուրքը կոմունարկաներ հագցրեց ենիչերիների գլուխները եւ Կրեմլի մեծ երազողին խաբեց, թե իբր համաշխարհային հեղափոխություն է անում: Եվ Լենինը Աթաթուրքին հորդորեց հրաժարվել պայմանագրի կետերը կատարելուց, խոստանալով մեծաքանակ ռազմամթերք եւ դրամական օգնություն:

Եվ Լենինը, ապա Ստալինը, մեր երկիրը առանց տիրոջը հարցնելու բաժան-բաժան նվիրեցին թուրքերին եւ ազերներին:

Այսպես կարկտահարվեց մեր բախտի ծառը: Բայց դու, քաջարի հայ զինվոր, նորից կռվի ելար քո հմուտ զորահրամանատարների կանչով: Առասպելական էին քո հաղթանակները Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում (Կիրովական, Վանաձոր): Այնքան առասպելական, որ Բաթումիի պայմանագիրն ստորագրելիս թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան ասաց.

-Կուզեի Ղարաքիլիսայի հերոս զինվորներից կազմված բանակ ունենալ:

Քո փառավոր հաղթանակը, զինվոր, եռագույն դրոշով անկախ պետականություն ապահովեց Հայաստանի համար:

Ժամանակը հոլովվեց... Եվ դու, կռիվների հոգնատանջ զինվոր, խաղաղ, ծաղկուն կյանքի դադար առար սովետների երկրում:

Մեկեն զորացավ, վերընձյուղեց մեր երկիրը. Հայաստանը կարճ ժամանակաշրջանում դարձավ համատարած գրագիտության, զարգացած արդյունաբերության ու գյուղատնտեսության, առաջատար, բազմաճյուղ գիտության, հարուստ մշակույթ ունեցող երկիր:

Ապրում էինք ունեւոր կյանքով...

Բայց պատերազմ բռնկվեց...

Դու շուրջ 600 հազարով կռիվ գնացիր Հայաստանը, քո տունը, օջախը պաշտպանելու: Մոսկվայի տակ, թե Ստալինգրադում, Կերչում, թե Կիեւում, Մերձբալթիկայում դու գերմանացու եւ թուրքի դեմ էիր կռվում: Եվ հաղթեցիր այդ դաժան պայքարում: Չորս մարշալներ, 107 Սովետական Միության հերոսներ, 36 փառքի եռակի շքանշանակիրներ, հարյուրավոր գեներալներ ունեցար: Դու գրավեցիր Բեռլինը եւ կայզերական ռայխստագի պատին գրեցիր,

- Ապարան-Բեռլին...
- Կիրովական-Բեռլին-Գալոյան...

Եվ ավանդական «Քոչարի»-դ պարեցիր Ռայխստագում:

Սա շառաչյան ապտակ էր պատմությանը, թշնամական պետություններին ու բանակներին

## «Մեր սուրը փառքով դրեցինք պատյան»

Եվ նորից սեւ ամպեր քո երկնակամարում, զինվոր:

Անսպասելիորեն լուծարվեց սովետական գերհզոր պետությունը: Անկախացան բոլոր 15 հանրապետությունները: Անկախության դրոշ պարզեց նաեւ Արցախը: Ազերները շրջափակեցին Հայաստանը, պատերազմ սկսեցին Արցախի դեմ:

Նորից դո՜ւ, դո՜ւ, դո՜ւ, հայ զինվոր ու աշխարհազոր, անզեն մարտի ելար թվով մեկուկես անգամ գերակշիռ, զինված ազերների, երեկվա կեղծավոր, նենգ, առերես բարեկամների դեմ: Այս մասին շատ է գրվել ու խոսվել: Վերջնահաշիվը պարզ է. քեզ հետ հերոսացավ մեր ժողովուրդը, զինվոր: Մեծ զոհերի գնով փառավոր հաղթանակ տարանք, ետ վերցրինք մեր սեփական հայրենիքի տարածքների մեկ մասը: Մենք գրոհում էինք, թշնամին խուճապահար փախչում, քանզի ունեինք զորավարների եւ քաջերի աննահանջ հոգիներ՝ Արկադի Տեր-Թադեւոսյան, Մոնթե Մելքոնյան, Վազգեն Մանուկյան, Վազգեն Սարգսյան, Մանվել Գրիգորյան, Սամվել Բաբայան, Սեյրան Օհանյան, Թաթուլ Կրպեյան, Շահեն Մեղրյան, հազարներ... Նրանցից շատերն ընկան, հերոսացան, հուշարձանների տեսք ստացան:

Պատերազմը դադարեց Ռուսաստանի միջնորդությամբ: Խորամանկ, խարդախ, նաեւ խելացի հայր Ալիեւը բոլորից շուտ զգաց ազերների ողբերգական վախճանը եւ Մոսկվայից միջնորդություն աղերսեց:

Հրադադար կնքվեց: Բայց մենք քաղաքական ստոր շուկայում էժան վաճառեցինք մեր արնաներկ հաղթանակը: Մեր դիվանագիտությունը ետ մնաց զինվորի սխրանքից: Հաղթող կողմը միշտ էլ ծանրակշիռ պայմաններ է ներկայացնում պարտվողին: Ոչ մի պայման, ոչ հատուցման ծախսեր, ոչ տարածքային պահանջներ (մեր հին տարածքների, ասենք՝ Նախիջեւանի): Չէ որ Թուրքիայի հետ մեր բազում պայմանագրերում մենք հսկայական տարածքներ ենք տվել հաղթողի պահանջով: Հայ Թալեյրա՞ն չունեցանք...

Արդյունքը... Տասնամյակներ անց պարտվողը հաղթողի հաստիքով է խոսում մեզ հետ, իսկ մենք՝ պարտվողի հոգեբանությամբ: Հաճախ բարձր մակարդակի հանդիպումներում Ալիեւն ու Մամեդյարովը իրենց ստահոդ մտքերն են հիմնավորում, իսկ մեր այրերը քրիստոնեական հանդուրժողականությամբ լռում են: Եվ տանուլ ենք տալիս դիվանագիտության մեջ, երբ ստի ու կեղծիքի դեմ չենք մարտնչում, տանուլ ենք տալիս նաեւ քաղաքականության բնագավառում:

Զինվոր, քեզ հետ հազարամյա ճանապարհ անցանք, թերթեցինք քո մարտական ուղիների տարեգիրքը: Ու դու համոզվեցիր, որ հիմնականում զինվորի շնորհիվ են հարատեւում պետությունն ու երկիրը: Իսկ խելացի թագավորների, զորավարների շնորհիվ ծաղկում է ազգը:

Այսօր աշխարհի բոլոր ծեգերում կռիվ է ու արյուն: Եղբայրասպան պատերազմ է Ուկրաինայում: Իրենք սպանում են իրենց՝ սեփական ժողովրդին: Դու, մշտարթուն հայ զինվոր, հեռու մնա սադրանքներից: Հիշիր, թե ում ես պաշտպանում, ում խաղաղ քունն ես հսկում: Հանգստի ժամին հիշիր նաեւ քո տունը, օջախը, մայրիկիդ ու երգիր քեզ համար.

**Թռչեի մտքով տուն,**
**Ուր իմ մայրն է արթուն...**

Ազերների խանը ամեն օր, ի լուր աշխարհի, շռայլորեն գովաբանում է իր կարծեցյալ անպարտելի բանակը, հեռսացնում մարդասպաններին, տգետ ու անտեղյակ զինվորներին վրեժի թույն ներարկում.

«Երեւանը մերն է...»

«Զանգեզուրը մերն է...»

«Սեւանը մերն է...»

Այս հաստիքային կեղծ ստերի համար դու մի լավ դաս տվեցիր խաբված ոհմակին, երբ քանիցս փորձեց սահմանդ խուժել, ուժերդ ստուգել: Սահմանի վրա իրենց զոհվածների մասին երկար լռեցին, հետո խոստովանեցին, բայց զոհվածներին «տեղավորեցին պատահարների» ցուցակներում:

Դու, հայ մշտարթուն զինվոր, սոսկ երկրապահ ու սահմանապահ չես: Բազմապլան հազարափեշակ զինվոր ես դու: Ասել է թե նաեւ տանկիստ ես, օդաչու, հրետանավոր, հետախույզ ու կապավոր... Օրերս Մերձմոսկովյան տարածքներում 12 պետությունների տանկիստների մրցույթում դու մարտավարժական սխրանքներ գործեցիր ու ճանաչվեցիր երկրորդը: Հարկավ, մարշալ Բաբաջանյանի դասերն էիր սերտել:

Եթե օդաչուների մրցույթ զորավարժություն լինի, բալթյան արծիվ Նելսոնին կհիշես ու Խանփերյանցին, հրետանավորների մրցույթում՝ գեներալ Գալաջեւին, ծով մտնես, քո դեմ իր գրքերը կբացի ծովակալ Իսակովը, ցամաքային մարտերում քեզ կառաջնորդի մեծն Բաղրամյանը:

Տեսնո՞ւմ ես՝ ինչքան հարուստ ես դու, ճակատագրով հայ զինվոր, եւ անպարտելի... ճակատագրով:

**ԱՆԴՐԱՆԻԿ ԱՎԱԳՅԱՆ**
**Վետերան ժուռնալիստ**
**Հրետանու պահեստի սպա**

**Հ.Գ.-** *Իմ հայ զինվոր: Բովանդակ հայ ժողովուրդն անչափ ուրախ ու հպարտ է, որ քո սերունդը ամենագրագետն է, տրապետում է մի քանի մասնագիտությունների: Մեկ տարի առաջ Վանաձորից 25 երիտասարդներ զորակոչվեցին նորանկախ Հայաստանի բանակ. բոլորն անխտիր բարձրագույն կրթություն ունեին: Երբ նրանք Արարատի մարզի N զորամասում երդում էին տալիս, որպես զինվորի պապ ես ելույթ ունեցա ու շեշտեցի, որ բանակաշինության պատմության մեջ սա ռեկորդային ցուցանիշ է, նախադեպը չունի: Այդ երիտասարդները բանասեր են, պատմաբան, ֆիզիկոս, մաթեմատիկոս, ծրագրավորող են, բոլորը տիրապետում են տեխնիկայի շատ միջոցների: Նշանակում է հայրենիքի պաշտպանությունը հուսալի ձեռքերում է:*

*Հանգիստ եղեք, մայրեր:*

*Սահմանը հսկում են ձեր որդիները, հայրենիքի մշտարթուն զինվորները:*

## Հայազգի ծովակալը. Լրացավ Հովհաննես Իսակովի ծննդյան 120 ամյակը

**Հայ զինհրամանատար, գիտնական, գրող, Խորհրդային Միության ռազմածովային նավատորմի ադմիրալ, Խորհրդային Միության հերոս Հովհաննես Ստեփանի Իսակովը ծնվել է 1894թ օգոստոսի 22-ին՝ Գարդմանքի Հաջիկենդ գյուղում՝ երկաթուղային բանվորի ընտանիքում: Իսակովը պատկանում է այն մարդկանց թվին, որոնց կյանքն անհամեմատ ավելի հարուստ է, քան նրանց մասին հյուսված լեգենդները: Մեծ է նրա ավանդը խորհրդային նավատորմի՝ հատկապես Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Բալթիկ եւ Սեւ ծովերի նավատորմերի ստեղծման գործում: Ռազմական գործից բացի, Իսակովը նաեւ գրող էր: 1958 թվականից Խ. Միության Գիտությունների ակադեմիայի օվկիանոսագիտության կոմիտեի անդամ է եղել, իսկ 1967 թվականից՝ Հայաստանի ԳԱԱ պատվավոր անդամ:**



**Նախ սովորել է Թիֆլիսի վարժարանի մաթեմատիկայի եւ գիտության բաժնում: 1913 թ. ընդունվել է Սանկտ-Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը: 1917 թ. Իսակովը մեկնել է Պետրոգրադ եւ ընդունվել ծովային դպրոց: Ավարտելով՝ ստացել է սպայի կոչում: Ռուսական հեղափոխությունից հետո ծառայությունը շարունակել է Բալթիկ ծովի նավատորմում, ուր ծառայել է Իզյասլավ, Ռիգա, Կոբչիկ ռազմական նավերի վրա: 1918 թ. մինչեւ Բրեստ-Լիտովսկի համաձայնագրի կնքումը մասնակցել է գերմանական նավատորմի դեմ մղված բազմաթիվ մարտերին: 1920 թվականից տեղափոխվել է Կասպից ծով եւ ծառայել որպես Դյաստելնըս հեծելավաշտային ականակիրի հրամանատար: 1922-23 թթ. ղեկավարել է Սեւ ծովի կապի եւ հետաքննության ծառայության հարավային ստորաբաժանումը: 1923-27 թթ. աշխատել է սեւծովյան նավատորմի ռազմածովային ուժերի շտաբի պետի տեղակալ: 1928 թ. Իսակովն ավարտել է Լենինգրադի ռազմածովային ակադեմիայի բարձրաստիճան հրամանատարական կազմի կատարելագործման դասընթացները: 1932 թվականից դարձել է Լենինգրադի ռազմածովային ակադեմիայի օպերատիվ արվեստի ամբիոնի պրոֆեսոր եւ դասավանդել է միեւնույն ուսումնական հաստատությունում՝ մինչեւ բալթյան նավատորմի հրամանատար նշանակվելը: 1938 թ. ստացել է լեյտենանտ-գեներալի կոչում եւ նշանակվել ռազմածովային գլխավոր վարչությունների ղեկավար:**

**Երկրորդ Աշխարհամարտի ժամանակ Իսակովը ղեկավարել է հյուսիսկովկասյան ճակատը: 1942 թ. հոկտեմբերի 4-ին գերմանացիների հարձակումից Իսակովը վիրավորվել է Տուապսեում, որի պատճառով ստիպված են եղել մի ոտքն անդամահատել: Պատերազմի մնացած ժամանակահատվածը անց է կացրել ռազմական հոսպիտալում: 1944 թ. մայիսի 31-ին Իսակովին շնորհվել է Խորհրդային Միության ռազմածովային ադմիրալի կոչում:**

**Մեծ է նրա ավանդը նաեւ ռազմական ոլորտում գիտական ուսումնասիրությունները իրականացնելու գործում: Արժանացել է բազմաթիվ մրցանակների ու պարգեւների: Մահացել է 1967 թ. հոկտեմբերի 11-ին՝ Մոսկվայում:**

**Ծովակալի մասին գրվել են գրքեր, ակնարկներ, ստեղծվել են նկարներ, փաստագրական ֆիլմեր:**

**Իսակովի անունով են կոչվել Ռուսաստանի Դաշնության ՌԾՈւ-ի մի հածանավ, ստորջրյա լեռ Խաղաղ օվկիանոսում, փողոցներ ՀՀ եւ ԼՂՀ քաղաքներում: Երեւանի համանուն պողոտայում կանգնեցվել է Իսակովի հուշարձանը:**

**ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Ի՞նչ «սեւ կատու» է անցել Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ

Թուրքիայի նախագահի երդմնակալությանն Ադրբեջանը մասնակցեց Միլլի մեջլիսի խոսնակի մակարդակով: Դա անսպասելի, երկու երկրների «եղբայրական հարաբերություններին» անհարիր որոշում էր, եթե, մանավանդ, նկատի առնվի, որ Ադրբեջանի սահմանադրությամբ նախագահից հետո պետական հիերարխիայի երկրորդ դեմքը վարչապետն է: Բայց, կրկնենք՝ հաշվի առնելով Բաքու-Անկարա ավանդական բարեկամության հանգամանքը, սպասելի էր, որ Էրդողանի պաշտոնամուտն իր ներկայությամբ պետք է պատվեր Իլհամ Ալիեւը:

Դա, ինչպես ասացինք, տեղի չունեցավ: Ավելին, խորհրդարանի խոսնակին Անկարա գործուղելով՝ Իլհամ Ալիեւն Էրդողանին դրեց Ուկրաինայի նախագահ Պետրո Պորոշենկոյի հետ նույն հարթության վրա, քանի որ վերջինիս երդմնակալությանը նույնպես ներկա էր գտնվել Ադրբեջանի Միլլի մեջլիսի նախագահը: Բայց եթե Ուկրաինայի դեպքում դա բացատրելի էր Ռուսաստանի հետ հարաբերությունները չփչացնելու անհրաժեշտությամբ, ապա Էրդողանի պարագայում, կարծես, արտաքին քաղաքական խոչընդոտներ չպետք է որոնել:

Ոչ ոք Իլհամ Ալիեւին չէր կշտամբի, թե ինչու է անձամբ ներկայանում Թուրքիայի նախագահի երդմնակալության արարողությանը, քանի որ աշխարհում բոլորն էլ գիտեն, որ Թուրքիան եւ Ադրբեջանը «մեկ ազգ, երկու պետություն են»: Խնդիրն, ուրեմն, գտնվում է Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների տիրույթում, որտեղ, կարելի է վստահաբար ասել, ամեն ինչ այնքան հարթ ու կանխատեսելի չէ, ինչպես ներկայացվում է սովորաբար:

Մենք մի քանի անգամ անդրադարձել ենք Ադրբեջանում «նուրսիական աղանդի» հովանավորներին իշխանությունից հեռացնելու Էրդողանի պահանջի եւ այն Իլհամ Ալիեւի կողմից բացահայտորեն անտեսելու թեմային: Ըստ երեւույթին, նախագահի պաշտոնի համար ծանր ընտրապայքարում դա Էրդողանի համար ուներ չափազանց սկզբունքային նշանակություն: Եւ Իլհամ Ալիեւի վերաբերմունքն, անկասկած, Թուրքիայում Էրդողանի մրցակիցներին հնարավորություն էր ընձեռել որոշակիորեն սրելու թուրք-ադրբեջանական «եղբայրության» հարցը՝ ի վնաս Էրդողանի:

Թուրքիայի նորընտիր նախագահի դիվանագիտական պատասխանն իրեն երկար սպասեցնել չտվեց: Դեռեւս մինչ նախագահի պաշտոնն ստանձնելն Էրդողանը հայտարարեց, որ առաջին ուղեւորությունը կկատարի Հյուսիսային Կիպրոս, այլ ոչ թե՝ Ադրբեջան: Իսկ Բաքվում սպասում էին, որ Էրդողանը նախապատվությունը կտա Իլհամ Ալիեւին: Ի՞նչն է Էրդողանին ստիպել, որպեսզի նախագահի պաշտոնում առաջին արտասահմանյան ուղեւորության մեկնի Հյուսիսային Կիպրոս, որտեղ, կարծես թե, իրավիճակն այնքան սուր չէ, որպեսզի ինքնահռչակ հանրապետությունն այդքան կարեւորվեր:

Ի տարբերություն Հյուսիսային Կիպրոսի, Ադրբեջանը ներքին եւ արտաքին բավական լուրջ խնդիրներ է հասցրել կուտակել: Իսկ նման պայմաններում նրա առաջին խորհրդատուն միայն Թուրքիան կարող է լինել, երկիր, որին Ադրբեջանը պարտական է անկախությամբ եւ վերջին տասնամյակի տնտեսական որոշակի հաջողություններով: Էլ չենք խոսում այն մասին, որ Թուրքիան միջազգային բոլոր ատյաններում հանդես է գալիս բացահայտ ադրբեջանամետ կեցվածքով: Այնքան, որ հարեւան երկրների հետ սեփական հարաբերությունները կառուցելիս պարտադիր հաշվի է առնում պաշտոնական Բաքվի տեսակետները:

Ադրբեջանը, սակայն, միշտ չէ, որ հետեւում է «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսին: Վերջին շրջանում դա հատկապես դրսեւորվում է Իսրայել- Ադրբեջան հարաբերություններում: Չնայած Թուրքիայի եւ Իսրայելի հարաբերությունների լարվածությանը, պաշտոնական Բաքուն շարունակում է հետեւողականորեն խորացնել բազմակողմ կապերը հրեական պետության հետ, ինչը, բնականաբար, չի կարող աննկատ մնալ Անկարայի համար:

Ամենայն հավանականությամբ, Էրդողան- Իլհամ Ալիեւ անձնական հարաբերությունները նույնպես փոխվստահության մակարդակի վրա չեն: Էրդողանի նախագահ ընտրվելու կապակցությամբ Բաքվից միայն «հերթապահ» շնորհավորանքի խոսքեր հնչեցին: Ադրբեջանական մամուլն ու քաղաքական շրջանակները, կարծես, չեն կարեւորում «դարի մեծագույն իրադարձությունը», այն, որ Էրդողանին հաջողվել է քվեարկության առաջին փուլում հաղթել եւ Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ դառնալ համաժողովրդական ընտրված նախագահ:

Կա՞, որդյոք, ներքին մրցակցություն Էրդողանի եւ Իլհամ Ալիեւի միջեւ՝ «բոլոր թուրքերի հայր» կոչվելու հարցում: Իլհամ Ալիեւը հազիվ թե չի հասկանում, որ Թուրքիայի միջազգային կշիռն անհամեմատ բարձր է, եւ այդ երկրի առաջնորդի հետ մրցակցությունն իր համար կարող է անցանկալի հետեւանքներ ունենալ: Այդպես է պատկերվում, սակայն, տեսականորեն: Գործնականում Ադրբեջանի քաղաքական վերնախավը, թվում է, կորցրել է իրականությունն ընկալելու ընդունակությունը եւ քարոզչական դաշտ է ձեւավորում, թե, ընդհակառակը, այդ «Թուրքիան է, որ ունի Ադրբեջանի կարիքը եւ չի կարող անտեսել ադրբեջանական գործոնի ազդեցությունն իր ներքին կյանքում»:

Սա ակնհայտորեն իշխանություններից հրահանգավորված «քաղաքագիտական վերլուծություն» է, որի առանցքի շուրջ համախմբվում են նաեւ Էրդողանի քաղաքական մրցակիցների շահերն սպասարկող՝ թուրք մեկնաբաններն ու քաղտեխնոլոգները: Նրանք շարունակում են պնդել, որ «թուրք հասարակությունը չի հասկանա եւ չի պաշտպանի Էրդողանին, եթե վերջինս Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման քայլեր ձեռնարկի»:

Ըստ ամենայնի, հենց այստեղ էլ պետք է տեսնել թուրք-ադրբեջանական հարաբերությունների «սեւ կատուն»: Բաքվում զգուշացած են, որ Էրդողանը կարող է ենթարկվել միջազգային հորդորներին եւ 2015-ի ապրիլին ընդառաջ՝ ինչ-որ քայլեր ձեռնարկել՝ թուլացնելու հայ-թուրքական հարաբերությունների լարվածությունը: Այդ են վկայում ադրբեջանական մամուլի բազմաթիվ հրապարակումներ, որոնք փորձում են կանխատեսումներ անել Էրդողանի երդմնակալությանն արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի մասնակցության «ենթատեքստի» շուրջ:

Չափազանց ուշագրավ է, որ երդմնակալությունից առաջ Էրդողանի եւ Իլհամ Ալիեւի միջեւ նույնիսկ հեռախոսազրույց տեղի չի ունեցել: Մինչդեռ պաշտոնից հեռացող Գյուլը հարկ էր համարել սեփական նախաձեռնությամբ կապվել Իլհամ Ալիեւի հետ եւ նրան շնորհակալություն հայտնել «տարիների համագործակցության եւ եղբայրական վերաբերմունքի համար»: Գյուլն, ինչպես հայտնի է, Թուրքիայի քաղաքական կյանքում առայժմ ոչ մի դերակատարություն չի ունենալու:

Էրդողանը, մինչդեռ, վերելքի ճանապարհին է: Եւ առաջիկա տարիներին նա է Թուրքիայի համար կարեւորագույն որոշումներ ընդունելու: Իհարկե, չափազանցություն կլիներ ասել, որ թուրք-ադրբեջանական հարաբերություններում լինելու է ինչ-որ տեղապտույտ: Ոչ, Էրդողանը պատրաստվում է առաջիկայում լինել Բաքվում: Այդուհանդերձ, Իլհամ Ալիեւի մոտ կմնա տհաճ նստվածք, որ Թուրքիայի նորընտիր նախագահն իրեն ստորադասել է Հյուսիսային Կիպրոսի ինքնահռչակ առաջնորդին:

Ադրբեջանի «նորին բռնապետական մեծությունը» չափազանց հավակնոտ եւ հիշաչար է, անգամ եթե խոսքը վերաբերում է «ավագ եղբորը»: Այդ հանգամանքն, անկասկած, իր հետքը կթողնի թուրք-ադրբեջանական հարաբերությունների վրա: Բայց Բաքվում եւ Անկարայում, ինչպես վերջին մի քանի տարիներին, ամեն ինչ կքողարկեն արեւելյան հաճոյախոսություններով: Մինչեւ որ Թուրքիայի համար կմոտենա վճռական քայլ կատարելու պահը:

Ինչի՞ն նախապատվությունը կտա Անկարան, Ադրբեջանի հետ հաճոյախոսություններ փոխանակելո՞ւն, թե՞ հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման հրամայականին: Ենթադրությունների չարժե տրվել: Քանի որ Թուրքիան եւ Ադրբեջանը շատ ավելի ընդհանրություններ, քան տարակարծություններ ունեն: Եւ այսօրվա «սեւ կատուն» վաղը կարող է նոր ընդհանրությունների սկիզբ դնել Բաքու-Անկարա առանցքի վրա: Պատահական չէ, որ օգոստոսի սկզբին հենց Թուրքիան էր Ադրբեջանին ցավակցություն հայտնել՝ շփման գծում կրած կորուստների համար:

**Ստեփանակերտ**

# Շոտլանդիան պատրաստվում է անկախության հանրաքվեին

## Վարչապետ Սալմոնդը լավատես է

**Շոտլանդիայում այս տարվա գարնանը սկսված անկախության հանրաքվեի նախապատրաստական աշխատանքները մոտենում են ավարտին. սեպտեմբերի 18-ին կայանալիք հանրաքվեին հաշված օրեր են մնացել: Վարչապետ Ալեքս Սալմոնդը օրերս Աբերդինում շոտլանդացի ձախամետ ընտրազանգվածին եւ մասնավորապես անկախացման հարցում հոռետեսորեն տրամադրված կանանց կոչ արեց միավորվել «Շոտլանդիան՝ շոտլանդացիներին» կարգախոսի շուրջը:**

**Ֆրանսիական «Մոնդ» օրաթերթը գրում է, որ Եվրոպայի նավթային մայրաքաղաք Աբերդինում Շոտլանդիայի ազգային կուսակցության համագումարի առիթով հավաքված հազարավոր մարդկանց առջեւ ելույթ ունենալով՝ կուսակցապետ Սալմոնդը հորդորել է քվեարկել անկախության օգտին:**



**«Այս հանրաքվեն չի վերաբերում որեւէ կուսակցության կամ վարչապետի... Խոսքը Շոտլանդիայի ապագան շոտլանդացիներին հանձնելու մասին է», ընդգծել է Ալեքս Սալմոնդը:**

**Վերջին ամիսների ընթացքում առաջին անգամ ի հայտ են եկել անկախության կողմնակիցների հնարավոր հաղթանակի նախանշաններ, արձանագրում է «Մոնդը»: Այսպես, հանրային հարցումների վերջին տվյալների համաձայն, անկախության կողմնակիցները կազմում են 40 տոկոս, հակառակորդները՝ 45 տոկոս, մինչ ընտրազանգվածի 15 տոկոսը դեռ չի կողմնորոշվել: Հենց այդ 15 տոկոսի քվեների համար է պայքարում վարչապետ Սալմոնդը:**

**Անկախական Սալմոնդը խոստանում է ձեւավորել «Շոտլանդական թիմ», որը վեր կլինի քաղաքական նեղ շահերից եւ հանրաքվեի դրական արդյունքի դեպքում մինչեւ 2016 թ. մարտի 24-ը կբանակցի անկախության պայմանների շուրջը, մասնավորապես՝ նավթային եկամուտների, ազգային արժույթի, ատոմային զենքի դուրսբերման եւ ԵՄ անդամության առնչությամբ:**

**59-ամյա Սալմոնդը եւ իր հետեւորդները ձգտում են իրենց կողմը գրավել Շոտլանդիայի աշխատավորական կուսակցության կողմնակից ընտրողներին: Իր ելույթում Սալմոնդը խոստացել է, որ «անկախ Շոտլանդիայում վերջ կգտնի շոտլանդացիների չընտրած պահպանական կառավարությունների ժամանակաշրջանը»:**

**2011 թ. ընտրություններից ի վեր Շոտլանդիայի ինքնավար խորհրդարանում Ազգային կուսակցությունը 65 տեղ ունի Աշխատավորական կուսակցության 38 եւ պահպանողական 15 պատգամավորների դիմաց: Մնացյալ տեղերը զբաղեցնում են լիբերալ-դեմոկրատները, «կանաչները» եւ անկախ թեկնածուները:**

**Իր ելույթում Սալմոնդը նաեւ խոստացել է, որ անկախ եւ հարուստ Շոտլանդիան կազատվի Լոնդոնի պահպանողականների սահմանած հարկերից, կունենա լավ վարձատրվող բուժքույրեր եւ հանրային առողջապահության կայուն համակարգ: Վարչապետը կին ընտրողների կասկածները փարատելու համար նրանց խոստացել է երկու սեռերի աշխատավարձերի հավասարություն եւ ձեռնարկությունների վարչական խորհուրդներում կանանց առնվազն 40 տոկոսանոց ներկայացուցչություն:**

**Օգոստոսի 25-ին Ալեք Սալմոնդը հեռուստատեսային բանավեճ անցկացրեց անկախության հակառակորդների առաջնորդի՝ Աշխատավորական կուսակցության նախկին նախարար Ալիստեր Դառլինգի հետ: «Գարդիան» թերթի տվյալներով, հեռուստադիտողների 71 տոկոսը դրական է գնահատել Սալմոնդի դիրքորոշումն ու պատասխանները: Սալմոնդը մասնավորապես վստահ է, որ ԵՄ անդամակցության հարցում Շոտլանդիային չեն մերժի, քանի որ երկիրը վաղուց կատարում է գործող կանոնները: Ինչ վերաբերում է արժույթին, եթե Լոնդոնը հրաժարվի կիսել ֆունտստեռլինգը Շոտլանդիայի հետ, ապա վերջինս չի ստանձնի Միացյալ Թագավորության պետական պարտքի իր բաժինը:**

**Պ. Ք.**

AZG NEW SHABAT 1.QXD 28/08/2014 22:31 Page 10



# Երերուն Եվրոպան: Նոր բնականոն երեւո՞յթ

***Նոր սառը պատերազմի եւ տարբեր պատժամիջոցների կիրառման հետեւանքով տուժում են Եվրոպայի երկրները: Stratfor աշխարհաքաղաքական էլեկտրոնային հանդեսի հիմնադիր Ֆրիդմանի հոդվածը անդրադառնում է Եվրոպայի երերուն տնտեսությանը:***

ՋՈՐՋ ՖՐԻԴՄԱՆ

Ռուսաստանն ու Ուկրաինան շարունակում են հակամարտել: Իրաքը մասնատված է, ներքին խռովությունները չեն նվազում: Իսկ Գազայում կացությունը մնում է խիստ ծանր: Այս բոլորը կարծես բավական պիտի լինեին համաշխարհային ճգնաժամ առաջացնելու համար: Բայց ոչ, դրանց ավելացավ նաեւ Գերմանիայի տնտեսության ցուցանիշի 0.2 տոկոսի անկումը անցյալ եռամսյակում: Գուցե շատերն ուշադրություն չդարձնեն դրան, բայց փաստը, որ աշխարհի չորրորդ եւ Եվրոպայի մեծագույն տնտեսության ցուցանիշը նվազել է, թեկուզ փոքր չափսերով, համաշխարհային նշանակության խնդիր է:

Եվրոպան արդեն կես տասնամյակ է, ինչ խրված է տնտեսական ճգնաժամի մեջ: Գերմանիան Եվրոպայի տնտեսության շարժիչ մեքենան է, եւ ակնկալվում է, որ ինչ-որ մի ժամանակահատվածում նա կկարողանա Եվրոպային դուրս բերել այդ ճգնաժամից: Կանխագուշակումներ կան, որ ի վերջո Եվրոպան կկարողանա շրջադարձ կատարել, բայց եթե Գերմանիայի տնտեսությունը անկում է ապրում (Բեռլինը պնդում է, որ ետաթռիչք կկատարի մինչեւ տարեվերջ), ապա դժվար է հավատալ, որ որեւէ շրջադարձ ընդհանրապես տեղի կունենա: Առավել տրամաբանական է դառնում հավատալ, որ բարեկեցիկ ապրելակերպի ժամանակավոր ընդմիջման փոխարեն Եվրոպայում բնականոն երեւույթի նոր դրսեւորում է իրականում նկատվում: Գլխավորն այստեղ այն չէ, որ Գերմանիայի տնտեսության ցուցանիշը մի փոքր նվազել է, այլ այն, որ ժամանակը եկել է հաշտվելու այն մտքի հետ, որ Եվրոպան հնարավոր է դեռ երկար ժամանակ չի վերագտնի իր նախա-2008 թվականի բարգավաճ իրավիճակը, եւ որ մենք պարտավոր ենք հաշվի առնել, թե դա ինչ կարող է նշանակել:

## Երերուն Եվրոպան

Գերմանիայի տնտեսության ցուցանիշը նվազեց հակառակ այն կանխատեսումների, որ զրոյական աճ էր արձանագրվելու: Բայց Եվրոպայի մյուս երկրներն էլ երերուն վիճակում են: Ֆրանսիայում զրոյական աճ է արձանագրվել: Իտալիայի տնտեսության ցուցանիշը նվազել է 0.2 տոկոսով: Եվրոպական միակ տնտեսությունը, որը աճ է արձանագրել՝ Միացյալ Թագավորության տնտեսությունն է: Մեծ Բրիտանիան, ինչպես գիտենք, Եվրոմիության անդամակցության ամենաթերահավատ երկիրն է: Իռլանդիայից բացի, որի տնտեսությունը ներկա ժամանակների համար բավականին խիզախ՝ 2.1 տոկոսի աճ արձանագրեց, ուրիշ ոչ մի եվրոպական երկրի տնտեսությունը մեկ տոկոսից ավելի աճ չարձանագրեց:

Ակներեւ է, որ աճի մակարդակը առողջ տնտեսության միակ գրավականը չէ, եւ վիճակագրական տվյալները միշտ չէ, որ ամբողջական պատկեր են տալիս: Աճը չի չափում սոցիալական իրականությունը: Ուրեմն անհրաժեշտ է դիտարկել գործազրկության ցուցանիշները: Չնայած Եվրոպան ընդհանուր առմամբ զուրկ է խոշոր վերիվայրումներից, այդուհանդերձ գործազրկության վիճակը իրոք չափազանց մտահոգիչ է: Իսպանիայում եւ Յունաստանում այն կազմում է մոտ 25 տոկոս, այսինքն այնքան, որքան Մ. Նահանգներում էր Մեծ ճգնաժամի տարիներին: Դա ցնցող է անշուշտ, բայց նշենք, որ Եվրոմիության 28 երկրներից 15-ում գործազրկության ցուցանիշը գերազանցում է 10 տոկոսը: Այդ ցուցանիշը երկրներից մեծամասնությունում պահպանվում է արդեն մի քանի տարի, եւ մտահոգիչն այն է, որ այն չի նվազում:

Եվրոմիության բնակչության կեսը ապրում է հիմնականում չորս երկրներում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում եւ Իտալիայում: Աճի միջին ցուցանիշը այս երկրներում մոտ 1.25 տոկոս է: Անգլիայից բացի, մյուս երկրների տնտեսության ցուցանիշները 0.1 տոկոսով անկում են արձանագրել: Գործազրկության ցուցանիշը բոլոր չորս երկրներում մոտ 8.5 տոկոս է: Բայց եթե Անգլիային դուրս թողնենք, ապա այդ ցուցանիշը կդառնա 9.2 տոկոս: Անգլիային դուրս թողնելը քմահաճ վերաբերմունք չէ: Այն չորս երկրներից միակն է, որ եվրոգոտու մեջ չի ներգրավված եւ Եվրոմիությունից անջատվելու ամենահավանական թեկնածուն է: Մյուսները ոչ մի տեղ «չեն գնում»: Միացյալ Թագավորությունն էլ գուցե «ոչ մի տեղ չի գնում», բայց դա դեռ մենք կտեսնենք: Գերմանիան, Ֆրանսիան եւ Իտալիան, առնվազն բնակչությամբ, եթե ոչ այլ առումներով, կազմում են Եվրոմիության կորիզը: Եթե նրանք աճ չեն արձանագրում, եւ գործազրկության ցուցանիշն էլ բարձր է, ապա նշանակում է, որ Եվրոպան, ընդհանուր առմամբ, չի աճում եւ գործազրկության ցուցանիշն էլ այնտեղ բարձր է:

Գլոբալ ֆինանսական ճգնաժամից հինգ թե վեց տարիներ անց, համատարած եւ անփոփոխ մնացած այս ցուցանիշները այլեւս չեն կարող պարբերական կամ ցիկլային համարվել, հատկապես եթե հաշվի առնենք, որ Գերմանիայում սպառվում են գազի պաշարները: Հետաքրքրական է իմանալ, թե ինչպես Գերմանիան հասավ այս վիճակին: Արտահանումը, նաեւ դեպի Եվրոպայի այլ երկրներ, շարունակում է աճ արձանագրել: (Այդ պատճառով է, որ եվրոպական մյուս երկրները դժվարանում են վերականգնել իրենց տնտեսությունը: Կորցնելով վերահսկողությունը իրենց համապատասխան շուկաների հանդեպ, նրանք չեն կարողանում մրցել գերմանական ապրանքների ներկրման դեմ:) Գերմանիայի ֆինանսական համակարգը թեեւ մնում է մրցունակ, սակայն սպառողական եւ կորպորատիվ վստահությունն անկում է ապրում: Զբաղվածությունը հիմնականում արտահանման հնարավորությունների հետ է կապված, բայց քանի որ այլ երկրներում պահանջարկը դեռեւս չի բարձրացել՝ սոցիալական պայմանների հետեւանքով, ապա սպառումը նվազել է, արգելք հանդիսանալով պահպանելու Գերմանիայի տնտեսության կայունությունը:

Գերմանացիների համար մտահոգության առարկա պետք է դառնա նաեւ երկրի բանկային համակարգը: Եվրոպայի ֆինանսական էլիտար շրջանակներում այն մտասեւեռումը կա, որ հակառակ գործազրկության զանգվածային բնույթին, ֆինանսական համակարգը առողջ է եւ հուսալի: Սակայն ինձ համար գաղտնիք է մնում այն հանգամանքը, թե ինչպե՞ս է, որ գործազրկության բարձր ցուցանիշը, սպառողական պարտքի ճգնաժամը, հիպոթեքային վարկերի չվճարումները եւ վարկային բարձր տոկոսադրույքների առկայությունը չեն հարվածում բանկերին: Տրամաբանական պիտի լիներ, որ բանկերը հայտնվեին ուժեղ ճնշման տակ: Չորս երկրներում վարկերի տոկոսային դրույքաչափերը գերազանցում են 20 տոկոսը: Վեց երկրներում դրանք տատանվում են 10-20 տոկոսի միջեւ: Վերջիններից թվում է նաեւ Իտալիան, որտեղ այն կազմում է 15.1 տոկոս: Իսպանիայում, որտեղ 24 տոկոսի է հասնում գործազրկությունը, այն 8.2 տոկոս է: Պորտուգալիայում, որտեղ գործազրկությունն ավելի նվազ է, 11 տոկոս: Ֆրանսիայում (ավելի քան 10 տոկոսի գործազրկության պայմաններում)՝ 4.3 տոկոս: Սատանան մանրամասնությունների մեջ է եւ գուցե կա որոշակի բացատրություն այս անոմալիաներում:

Սակայն հարցը մնում է այժմեական. ինչպե՞ս է, որ նման իրավիճակը լուրջ խնդիրներ չի առաջացնում: Պարզ չէ, թե ինչպես է Եվրոպան բացում այդ Գորդյան հանգույցը: Հաշվի առնելով Եվրոպայի երկարաժամկետ տնտեսական «հիվանդությունը», ուժեղ պատճառաբանություն է անհրաժեշտ գտնել այդ ամենը «անցողիկ փուլ» բնորոշելու համար:




Եվրոպայում տիրող գործազրկության, Գերմանիայի արտահանման կարիքների եւ այնտեղ տնտեսության աճի տեմպերի նվազման պայմաններում, պարզապես հստակ չի երեւում, թե ինչ ուժ է կարողանալու շրջել այս գործընթացը: Հավանական է, որ այն շարունակվի դեռ որոշ ժամանակ, քանի որ դժվար է կանխատեսել առայժմ մի բան, որ կվերադարձնի Եվրոպային իր նախկին կենսունակությունը:

## Քաղաքական հարց

Այստեղ բնականաբար քաղաքական մի հարց է ծագում: Եթե Եվրոմիության տնտեսական նախադրյալը՝ բարգավաճումը հարցական տակ է, ապա ի՞նչն է, որ միավորում է Եվրոպային: Հարցը տեղին է, եթե հաշվի առնենք Ռուսաստանի եւ եվրոպական թերակղզու միջեւ գոյություն ունեցող տարանջատիչ գիծը եւ այն, որ Եվրոպան կշռադատված ներկայություն է ապահովում իրեն Ուկրաինայում: Լեհաստանի եւ Ռումինիայի շահերը Ուկրաինայում հստակ են: Իսպանիայինը՝ ոչ այնքան: Եվրոմիության բարգավաճմանը եւ դրա պահպանմանը միտված համընդհանուր նպատակները չեն կարող գործել, իրականություն դառնալ, երբ ակնհայտ տարաձայնություններ կան երկրների միջեւ եւ երբ տնտեսությունը կառույցի ներսում խեղված է: Սրանում ներառված են Մեծ Բրիտանիայի սպառնալիքները՝ դուրս գալու Եվրոմիությունից եւ կորուստը այն համընդհանուր հետաքրքրությունների եւ շահերի, որ ժամանակին միավորում էր երկրներին:

Տարաձայնությունների բնագավառի ամենացայտուն նշանը հակակառույց եւ եվրոսկեպտիկ կուսակցությունների կամ կառույցների առաջացումն է: Նրանք իրենց լավ դրսեւորեցին Եվրոխորհրդարանի վերջերս կայացած ընտրություններում: Քաղաքական նման փոփոխումը շատերի կողմից անտեսվում է որպես սոսկ բողոքի արտահայտություն: Մինչդեռ այն կարելի է դիտարկել որպես ապագայի կանխագուշակում: Իմ կարծիքով այդ չափսերի եւ ընդգրկումի բողոքի արտահայտության քվեները հենց իրենցով էլ նշանակալի են: Նրանք մեզ հիշեցնում են, որ սոցիալական խլրտումների ամենավտանգավոր աղբյուրը ոչ թե երիտասարդ գործազուրկների բանակն է, այլ միջին տարիքի տղամարդիկ եւ կանայք, որոնք կորցրել են իրենց աշխատանքը եւ ներդրումները: Նրանք ապրում են խորտակված հույսերի աշխարհում եւ հավատացած են, որ ուրիշներն են առաջ բերել իրենց դժբախտությունը: Երիտասարդները կարող են քարեր գցել զայրույթից ելնելով, բայց նրանք ի վերջո տուն են գնում, վերադառնում: Միջին խավի եւ միջին տարիքի մարդիկ, կորցնելով իրենց երազանքները եւ հույս չունենալով վերականգնել որեւէ բան, ֆաշիզմի տարրեր են ձեռք բերում եւ դառնում իրական սպառնալիք եվրոպական նոր իրականության համար:

Ռուսաստանը կարեւոր է: Կարեւոր է նաեւ արմատական մահմեդականությունը: Բայց Եվրոպայի ճակատագիրը կենսական այն ուժն է, որը ձեւավորելու է աշխարհը: Ռուսաստանի կարեւորությունը մեծանում է, մինչդեռ Եվրոպան մասնատվում է: Եվրոպան իր սեփական, ներքին խնդիրներն ունի մահմեդականության հետ: Տնտեսության երկարաժամկետ կարծրախտի (սկլերոզ) եւ շարունակական գործազրկության պայմաններում ինչպե՞ս են եվրոպացիները վարվում իրենց շրջապատում ապրող ներգաղթյալների հետ: Ինչպե՞ս է մայրցամաքը ընդունում բաց սահմանների քաղաքականությունը: Հետագա ազդեցությունները կարող են շատ խորը լինել: Ժամանակն է հաշտվել այն մտքի հետ, որ տնտեսության աճ չարձանագրող Եվրոպայի, որն ունի գործազրկության բարձր ցուցանիշ եւ ոչ մի հեռանկար դուրս գալու ճգնաժամից, ներկա իրավիճակը դեռ երկար կարող է շարունակվել: Երերունը կհամարվի նոր բնականոն երեւույթ կամ բնականոնի նոր դրսեւորում:

**Geopolitical Weekly**
**Stratfor G.I.**
**Թարգմ. Հ. Ծ.**

AZG NEW SHABAT 1.QXD 28/08/2014 22:31 Page 11



# Հայաստանի հանրակրթական դպրոցներում անցկացվող «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական երրորդ փառատոնի ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Սույն կանոնակարգը սահմանում է **2014 թվականին** Հայաստանի դպրոցներում անցկացվող «**Երգը բարեկամության կամուրջ է**» ռուսական երգի հանրապետական երրորդ փառատոնի կարգավիճակը, նպատակներն ու խնդիրները, ընթացակարգը:

**Փառատոնի նպատակն է՝** Աջակցել ռուսաց լեզվի մասսայականացմանը, Հայաստանի դպրոցականներին հաղորդակից դարձնել ռուս ժողովրդի մշակութային եւ հոգեւոր արժեքներին, նպաստել Ռուսաստանի նկատմամբ նրանց հետաքրքրության ակտիվացմանը, աջակցել ռուսաց լեզվի եւ ռուսական մշակույթի վարկի բարձրացմանը, Ռուսաստանի մասին ստեղծված բարենպաստ հասարակական կարծիքի պահպանմանն ու հետագա խորացմանը, Ռուսաստանի՝ որպես Հայաստանի ռազմավարական գործընկերոջ վերաբերյալ գիտելիքների տարածմանը:

### Փառատոնի խնդիրներն են՝

▼ մատաղ սերնդի միջավայրում մասսայականացնել ռուսաց լեզուն եւ ռուսական մշակույթը՝ օգտագործելով ռուսական երգարվեստի ռուսալեզու տեղեկատվական ընդարձակ տարածքի, ինչպես նաեւ ռուսական երգի բարձր վարկանիշի առավելությունների ընձեռած հնարավորությունները

▼ ռուսաց լեզվի եւ ռուսական մշակույթի օրերի շրջանակներում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումների շնորհիվ դպրոցականների համար ձեւավորել մի այնպիսի գրավիչ հարթակ, որը կնպաստի ըստ նախասիրությունների վերջիններիս ունակությունների առավել դրսեւորմանը, ռուսաց լեզվի եւ ռուսական մշակույթի նկատմամբ հետաքրքրվածության արթնացմանն ու զարգացմանը

▼ փառատոնի շրջանակներում անցկացվող բոլոր միջոցառումները նպատակաուղղել Ռուսաստանի նկատմամբ բարենպաստ հասարակական կարծիքի պահպանմանն ու հետագա խորացմանը, այն դիտելով որպես ռուսաց լեզվի եւ մշակույթի վարկը կանխորոշող գլխավոր բաղադրիչներից մեկը

▼ անցկացվող բոլոր միջոցառումները նպատակաուղղել ռուսաց լեզվի եւ ռուսական մշակույթի մասսայականացմանը հանրապետության մատաղ սերնդի ամենաբազմաքանակ լսարանի՝ դպրոցականների շրջանում:

Փառատոնը կազմակերպվում է «**Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության, «Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության** կողմից՝ ՀՀ Կրթության եւ Գիտության նախարարության, ՀՀ Մշակույթի նախարարության, Երեւանի քաղաքապետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների ակտիվ մասնակցությամբ "Русский мир" հիմնադրամի (Ռուսաստանի Դաշնություն) մասնակի ֆինանսավորմամբ:

### Փառատոնի մասնակիցները

Փառատոնի մասնակիցներ են համարվում Հայաստանի Հանրապետության դպրոցների աշակերտները՝ առանց տարիքային սահմանափակումների:

Փառատոնի շրջանակներում հանրապետության դպրոցներում նախատեսվում է անցկացնել.

◆ ռուսաց լեզվի եւ ուսական մշակույթի Օրեր
◆ ռուսական երգի լավագույն կատարման մրցույթ
◆ ռուսաց լեզվով լավագույն շարադրության մրցույթ

Փառատոնն անց է կացվում չորս փուլով՝ **նախապատրաստական, դպրոցական, մարզային եւ եզրափակիչ փուլ:**

### Նախապատրաստական փուլ.
**(ժամկետը՝ օգոստոսի 1- 31-ը)**

Այս փուլում ձեւավորվում է փառատոնի Կազմակերպչական կոմիտեն, մշակվում է փառատոնի կանոնակարգը եւ որպես հավելվածներ՝ շարադրությունների գնահատման չափորոշիչները, ռուսական երգի մրցույթի համար երաշխավորվող երգերի ցանկը, ռուսական առաջին եւ երկրորդ փառատոններից հետո ռուսաց լեզվի նկատմամբ ձեւավորված վերաբերմունքի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով անցկացվելիք հարցաթերթիկային ուսումնասիրությունների փաստաթղթերը, երգի մրցույթին մասնակցելու համար հայտի ձեւը, ձեւավորվում է աշխատակազմը, կամավորների ցուցակները:

Այս փուլում նախատեսվում է նաեւ փառատոնի կազմակերպման եւ անցկացման հարցերը քննարկելու նպատակով Կազմկոմիտեի անդամների հանդիպումները մարզերի եւ Երեւան քաղաքի ղեկավարության հետ, ինչպես նաեւ փառատոնի մասին տեղեկատվության տարածում դպրոցներում եւ փառատոնի կազմակերպման հարցում շահագրգիռ բոլոր կազմակերպություններում:

### Դպրոցական փուլ.
**(ժամկետը՝ սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 20-ը)**

Փառատոնի դպրոցական փուլն անց է կացվում հանրապետության դպրոցներում:

Դպրոցական փուլի շրջանակներում նախատեսվում է՝

▼ դպրոցներում անցկացնել ռուսաց լեզվի եւ ռուսական մշակույթի Օրեր, որի շրջանակում դպրոցականների նախասիրությունների հաշվառմամբ կազմակերպել բազմաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ գրական-երաժշտական կոմպոզիցիաներ, ռուսական պոեզիայի երեկոներ, թատերական ներկայացումներ, ռուսաց լեզվի բաց դասեր, Կլոր սեղաններ, վիկտորինաներ, լեզվի վարպետության դասեր: Օրերի շրջանակներում նախատեսվում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ երկարատեւ հարաբերություններ հաստատել Հայաստանի եւ Ռուսաստանի դպրոցների միջեւ, որը կարող է վերածվել նաեւ անմիջական շփման, տեղեկությունների փոխանակման, փոխադարձ այցելությունների, մշակութային երկխոսության եւ այլն:

Հիշատակված բոլոր միջոցառումներն անց են կացվում ռուսաց լեզվով:

▼ ռուսական երգի լավագույն կատարման մրցույթ հետեւյալ ժանրերում՝

- Ռուսական ժողովրդական երգ,
- Ռուսական հայրենասիրական երգ,
- Ռուսական ռոմանս,
- Ռուսական Էստրադային եւ մանկական երգ,
- Հայկական երգ ռուսերեն լեզվով:

Մրցույթի արդյունքներով ձեւավորվում է հաղթողների դպրոցական թիմը՝ մարզային փառատոնին մասնակցելու համար: Յուրաքանչյուր թիմում կարող են ներգրավվել առավելագույնը հինգ հոգի՝ մեկական հաղթող յուրաքանչյուր ժանրից:

▼ ռուսաց լեզվով լավագույն շարադրության մրցույթ երաշխավորվող հետեւյալ թեմաներով (մասնակիցների ընտրությամբ)՝

- Ռուսաստանը եւ ռուսաց լեզուն իմ կյանքում

Ռուսաց լեզուն որպես միջազգային եւ ազգամիջյան հաղորդակցման լեզու

Միաժամանակ դպրոցի ղեկավարությունը իրավասու է առաջադրել շարադրության իր կողմից ընտրած թեման, իսկ մրցույթի մասնակցին հնարավորություն է տրվում շարադրության թեման ընտրել ինքնուրույն:

Դպրոցական փուլում հաղթողների հայտերը, ինչպես նաեւ մրցութային շարադրությունների տեքստերը մարզային ժյուրի (Երեւանում՝ քաղաքային ժյուրի) են ներկայացվում դպրոցական փուլն ավարտելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում: Դպրոցներից մարզային ժյուրիի քննարկմանը ներկայացվող շարադրությունների քանակը որոշում են կրթության մարզային մարմինները:

### Մարզային փուլ.
**(ժամկետը՝ հոկտեմբերի 21 – նոյեմբերի 10-ը)**

Մարզային փուլում անց են կացվում ռուսական երգի լավագույն կատարման մրցույթ դպրոցական փուլում հաղթած թիմերի մասնակցությամբ: Այս փուլում կատարողի գնահատման չափանիշ կդիտվի նաեւ մասնակցի կողմից ռուսերեն բառերի ճիշտ արտասանությունը, կատարողի իրազեկվածությունը երգի հեղինակների, երգի ստեղծման պատմության մասին: Կատարողը երգի մասին տեղեկատվությունը ներկայացնում է կատարումից առաջ:

Հանրապետական փուլին մասնակցելու համար մարզային փուլից ընտրվում են առավելագույնը 5 մասնակից (յուրաքանչյուր ժանրից մեկական հաղթող): Երեւան քաղաքից եզրափակիչ փուլին մասնակցելու համար կարող են ընտրվել ընդհանուր հաշվով 15 հոգի՝ յուրաքանչյուր ժանրից երեքական լավ կատարող:

Այս փուլում մարզային ժյուրին ընտրում է ռուսաց լեզվով շարադրության մրցույթի լավագույն 5-ական աշխատանք, իսկ Երեւան քաղաքի ժյուրին՝ մինչեւ 10 աշխատանք՝ հանրապետական փուլ ներկայացնելու համար:

Մարզային փուլի ավարտից հետո լավագույն կատարողները համերգով հանդես կգան մարզկենտրոններում եւ Երեւան քաղաքում:

Եզրափակիչ փուլին մասնակցելու համար հայտերը եւ շարադրությունները ներկայացվում են հանրապետական փուլ մինչեւ նոյեմբերի 15-ը:

Եզրափակիչ փուլին ներկայացված շարադրությունները պետք է հավաքված լինեն համակարգչով, Word ֆորմատով եւ չպետք է գերազանցեն 4 համակարգչային էջը:

Մրցութային աշխատանքը պետք է ունենա տիտղոսաթերթիկ, որի վրա անհրաժեշտ է նշել

- Ազգանուն
- Անուն
- Ծննդյան թիվ
- Հասցե
- Հեռախոս, էլ. փոստ (եթե առկա է)
- Ուսումնական հաստատության անվանումը, վայրը, դասարանը

Հանրապետական փուլ ուղարկված շարադրություններին կից պետք է ներկայացվի նաեւ մարզային (քաղաքային) ժյուրիի որոշումները:

### Եզրափակիչ փուլ
**(ժամկետը՝ նոյեմբերի 11-ից դեկտեմբերի 30-ը)**

Եզրափակիչ փուլը տեղի կունենա Երեւանում, որին կմասնակցեն հանրապետության մարզային եւ Երեւան քաղաքի թիմերը:

Հանրապետական երգի մրցույթը տեղի կունենա Երեւանում՝ մարզային փուլի հաղթողների մասնակցությամբ: Հանրապետական երգի մրցույթը, ինչպես նաեւ ռուսաց լեզվի շարադրությունների մրցույթի ամփոփումը կանցկացվի նոյեմբերի երրորդ տասնօրյակում: Փառատոնի դափնեկիրների եւ շարադրությունների մրցույթի հաղթողների պարգեւատրման արարողությունը տեղի կունենա 2014 թ. դեկտեմբերի առաջին տասնօրյակում:

Եզրափակիչ փուլի մասնակիցների Երեւանում կեցության եւ սննդի հետ կապված ծախսերը հոգում են փառատոնի կազմակերպիչները:

### Հաղթողների պարգեւատրումը

Փառատոնի հանրապետական փուլի բոլոր մասնակիցները պարգեւատրվում են պատվոգրերով:

Փառատոնի հաղթողները պարգեւատրվում են արժեքավոր նվերներով եւ փառատոնի դափնեկրի դիպլոմներով:

Փառատոնի դափնեկիրները իրավունք են ստանում հանդես գալ Երեւանում տեղի ունենալիք եզրափակիչ համերգին:

Ռուսաց լեզվով լավագույն շարադրության մրցույթի հաղթողները պարգեւատրվում են արժեքավոր նվերներով եւ դիպլոմներով:

### Փառատոնի կազմակերպչական կոմիտեն

Փառատոնի աշխատանքները կազմակերպում եւ ղեկավարում է Կազմկոմիտեն, որը ձեւավորվում է Ռուսաստանի հայերի միության, Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնի, Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության, ՀՀ Կրթության եւ գիտության նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության, Երեւանի քաղաքապետարանի կրթության, մշակույթի եւ տուրիզմի վարչությունների, ինչպես նաեւ այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներից:

**Փառատոնի կազմակերպիչների հասցեն**
0009,ք. Երեւան, Տերյան 69
Հեռ. 51 04 40, 51 04 42, 51 04 43, 51 04 45
Ֆաքս `51 04 41
E-mail: vladis@netsys.am

# Ուշի գյուղի՝ 90-ականներից շահագործվող խմելու ջրի մատակարարման համակարգը փոխվել է

**Համայնքում առկա հիմնախնդիրներից մեկի՝ խմելու ջրի մատակարարման համակարգի նորացման համար, ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանն անձնական միջոցներից հատկացրել է 16 մլն դրամ: Կամավորության սկզբունքով հայրենակիցներին օգտակար լինելու մոտեցումը՝ աշխատավայրում անձնական օրինակով առաջնորդելու լավագույն տարբերակներից է: Ներդրման շնորհիվ փոխվել է ավելի քան 1600 մ երկարության մայր ջրագիծը: Իրականացված ծրագրի արդյունքից օգտվելու է 650 ընտանիք:**

**Գյուղի խմելու ջրամատակարարման համակարգը կառուցվել է հեռավոր 90-ականներին: Համայնքային բյուջեի սղության պատճառով՝ համակարգը նորով փոխարինելու անհրաժեշտությունը, տարիներ շարունակ, ծրագրի չի վերածվել: Մայր ջրատարը ենթարկվել է միայն մասնակի վերանորոգման: Տեղանքի ռելիեֆը եւ տարիների ազդեցությունն իրենց հետքն են թողել խողովակների վրա: Դրանք քայքայվել են, ենթարկվել կոռոզիայի: Ռալֆ Յիրիկյանի դրսեւորած պատրաստակամությունը, ինչպես նաեւ նոր համակարգի կառուցման հնարավորությունը, ոգեւորել են բնակիչներին: Ամռանը երկրորդ կեսին մեկնարկած շինարարական աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել հենց ուշեցիները:**

**Բնակիչների մեծ մասի նախնիներն, ի դեպ, այս համայնք են գաղթել Արեւմտյան Հայաստանից: Պատմական Հայաստանի տարբեր նահանգներից հարուստ մշակույթ ժառանգած համագյուղացիները կարեւոր ձեռքբերում են համարում նաեւ գյուղի մշակույթի տան վերակառուցումը: Շենքը ծառայում է որպես գյուղապետարան, մշակույթի տուն եւ գրադարան: Այդտեղ է տեղակայված նաեւ փոստային ծառայության գրասենյակը: Նախկինում ավերակներ հիշեցնող շենքն ամբողջությամբ վերափոխվել է: Ռալֆ Յիրիկյանը միացել է նաեւ կանադահայ հայրենակից Մարգար Շարապխանյանի նախաձեռնությանը եւ շուրջ 12 մլն դրամ էլ հատկացրել է մշակույթի տան վերանորոգման համար:**

**«Ուշիում վաղուց հաստատված մեր հայրենակիցները «էրգրի» շենացման երազանքն իրականություն են դարձնում այստեղ: Փոքրիկ Արեւմտահայաստան հիշեցնող այս գյուղն ուշագրավ է իր բնակչության կազմով: Շատ կարեւոր է նրանց կողքին լինելը: Առհասարակ, միմյանց աջակցելը մեր ազգային բնավորության դրական գծերից է: Դրա շնորհիվ նաեւ՝ հայը շարունակում է ապրել ու ապրեցնել հայրենիքը»,- ասել է Ռալֆ Յիրիկյանը:**

AZG NEW SHABAT 1.QXD 28/08/2014 22:31 Page 12



# Շնորհակալութիւն, մարդ...



«Գեղեցիկ է Երեւանը, նամանաւանդ գիշերով...»:

Ղեկին մօտ նստած վարորդը նկատելով երաժշտութեան կշռոյթին ենթարկուած մատներուս ակամայ շարժումը, կամացուկ մը կը զօրացնէ ձայնը: Մայրաքաղաքի գիշերային տեսարանները սիրուած երգի հնչիւններուն ներքոյ, հաճելիօրէն զիրար կը յաջորդեն:

Մինչ ձեռքս կ'երկարեմ գօտիիս վրայ տեղադրուած հեռաձայնիս, նրբանկատ վարորդն անմիջապէս կը մեղմացնէ երաժշտութիւնը:

Ուղեւորի աւարտին կը կայանայ ազնիւ հաշուարկը եւ՝ բարի գիշեր... Սակայն հանգիստ քնանալ չի յաջողուիր: Երկար փնտռտուքէ մը ետք, չգտնելով դրամապանակս, կը յիշեմ գիշերային թաքսին, որու վերաբերեալ ոչ մէկ տուեալ ունիմ:

Առտուն, օրը լաւատեսութեամբ սկսելու ճիգով, կը փորձեմ մոռնալ կրած նիւթական զգալի կորուստս: Կը նստիմ տանս մօտ գտնուող առաջին իսկ թաքսին: Երբ կը յայտնեմ երթիս ուղղութիւնը, վարորդը կը ժպտի, ապա խնամքով ինծի կը պարզէ կորսուած դրամապանակս. «Թաքսիում ընկած էր, առաւօտ կանուխ նկատեցի եւ շտապեցի այստեղ, յուսալով՝ հանդիպել Ձեզ...»: Մօտէն կը ծանօթանամ երեսունչորսամեայ վարորդ Վահան Պատիկեանին, որ տարիներէ ի վեր բարեխղճօրէն կը սպասարկէ թաքսիի ծառայութենէն օգտուող իր ուղեւորները, դառնալով շատերուն հաւատարիմ ու վստահելի ընկերը:

Եթէ մարդկային ազնուութեան պակասը կրնայ պայմանաւորուած ըլլալ երկրին մէջ ստեղծուած անթիւ դժուարութիւններով, նկարող սարքերու յաճախ անհարկի ու անտրամաբանական տուգանքներով, աշխատանքային ծանր օրուան աւարտին երբեմն՝ պլանը չամբողջացնելու, յաճախ ալ ձեռնունայն տուն վերադառնալու դաժան իսկութեամբ, ապա՝ այդ գործօնները բնաւ չեն ազդած Վահան Պատիկեանի մարդկային նկարագրին վրայ: Երիտասարդ, կոկիկ արտաքինով վարորդին ազնուութիւնը՝ անսահման լաւատեսութիւն, սէր ու հպարտութիւն կը ներշնչէ մեր նուիրական հայրենիքին հանդէպ:

Երեւանը ցերեկով ալ գեղեցիկ է, նամանաւանդ իր օրինակելի քաղաքացիներով:

Շնորհակալութիւն, Վահան, շնորհակալութիւն, մա՛րդ...

**ՌՈՊԵՐԹ ԱՌԱՔԵԼԵԱՆ**
**Պէյրութ-Երեւան**

# Անի Կարմիրյանը՝ Գյուլբենկյանում

**Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի հայկական համայնքների բաժինը տեղեկացնում է, որ Անի Կարմիրյանը նշանակվել է ծրագրավորման ավագ պատասխանատու: Նա սեպտեմբերի 1-ից կրթական ասպարեզում իր հարուստ փորձառությունն է ներդնելու հիմնադրամի առաջնահերթ խնդիրներից՝ արեւմտահայերենի պահպանման գործին:**

**Կարմիրյանը ծնվել ու մեծացել է Ստամբուլում: Ապրել է Իտալիայում, Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում եւ Մ. Նահանգներում: Լեզվաբանության եւ մանկավարժության գծով մագիստրոսի կոչում է ստացել Հայդելբերգ համալսարանից, իսկ ավելի ուշ կրթական ոլորտում առաջատար դասիարակի կոչում՝ Նյու Յորքի հեղինակավոր «Բենք սթրիթ քոլեջից»:**

**Հիմնադիրն է Փարիզում «Մկնիկ» երկլեզվյան (հայերեն-ֆրանսերեն) կրթական աշխատանքային ծրագրի: Դասավանդել է երկրորդ (օտար) լեզվի ձեռք բերման մեթոդաբանություն Փարիզ III համալսարանում: 2000 թվականից Նյու Ջերսիի Հովնանյան վարժարանի տնօրենն է: Երկլեզվյա կրթության վերաբերյալ ունի հրատարակված բազմաթիվ հոդվածներ:** Հ. Ծ.

# ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ «Ազգ»-ԻՆ

***Հեռուստատեսությամբ, ռադիոյով, տպագիր մամուլով ու համացանցով Դուք հետեւում եք ազգային, տարածաշրջանային եւ միջազգային անցուդարձին,***

***Բայց ցանկանում եք այդ հարահոսի մեջ առանձնացված տեսնել նշանակալիցն ու կարեւորը,***

***Եվ ուզում եք դրանց շուրջ հավելյալ մանրամասնություններ, մեկնաբանություններ, վերլուծություն ու կարծիք իմանալ,***

**Ուրեմն՝ կարդացեք «Ազգ»:**

Մեր վերլուծաբանները, մեկնաբաններն ու թղթակիցները Ձեզ համար ձեռնհասորեն կանեն այդ գործը,

Մեր թարգմանիչները տարբեր լեզուներից Ձեզ կծանոթացնեն նաեւ միջազգային հեղինակություն վայելող վերլուծաբանների կարծիքին,

Մեր խմբագրությունը բծախնդիր ուշադրությամբ կծանոթանա նաեւ Ձեր տեսակետներին ու կարծիքին եւ կհրապարակի դրանք:

**Ուրեմն՝ բաժանորդագրվեք Ազգ»ին:**

Ամեն ուրբաթ առավոտ, տարեկան 48 շաբաթ, ընդամենը 9000 դրամով, Դուք կարող եք Ձեր տանը, գրասենյակում կամ աշխատավայրում ստանալ «Ազգ»ի 16 էջանոց համարը, որի 4 էջը ամբողջովին հայ եւ օտար մշակույթին է նվիրված:

Կանոնավոր հետեւելու համար «**Ազգ**»ի հրապարակումներին՝ պարզապես դիմեք՝

- **Հայփոստի** (բաժանորդագրության բաժին, հեռախոս՝ 010-51.45.47) բաժանմունքներին,
- **Հայմամուլին** (010-45.07.61),
- **Պրես Սենդին** (010-522.199):

Կարող եք դիմել նաեւ «**Ազգ**»ի տնօրենությանը՝ 010-58.29.60 եւ 077 55.63.85 հեռախոսահամարներով, կամ azg3@arminco.com եւ կամ azg@azg.am էլ. հասցեներով: «Ազգ օրաթերթ» ՍՊԸ-ի հաշվեհամարն է՝ «Յունիբանկ» ՓԲԸ՝ 24100102134400:

# ՎիվաՍել-ՄՏՍ-ը եւ Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը» շարունակում են համագործակցությունը

**Սահմանամերձ Երվանդաշատ գյուղում սպասված բնակարանամուտ էր: Երկրորդ ընտանիքը եւս մոտ է երազանքի իրականացմանը: ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, ընկերության՝ կամավոր անդամագրված աշխատակիցները, Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» թիմը եւ ԱՄՆ-ից ժամանած «Գլոբալ Բիլդերս» կամավորական խումբը միավորել են ուժերը՝ Մուրադյանների ընտանիքի կիսակառույց տան շինարարությունն ավարտին հասցնելու համար: Շինարարական աշխատանքներին հաջորդել է նույն գյուղի մեկ այլ՝ Ղազարյանների ընտանիքի տան տնօրհնեքի արարողությունը:**



**«Շնորհակալ ենք, որ ամուր կանգնած եք սահմանը պահող ընտանիքների կողքին: Չկա ավելի մեծ երջանկություն, քան գիտակցությունը, որ դու մենակ չես, եւ որ քո կողքին կանգնած են արտասովոր մարդիկ, ովքեր իրենց պատրաստակամ օգնությամբ ավարտին են հասցրել երկար սպասված տան շինարարությունը: Շուտով մենք էլ մեր նոր ու հարմարավետ տուն կտեղափոխվենք: Անչափ ուրախ ենք, որ այսօր մեր համագյուղացու՝ արդեն կառուցված տունն է օրհնվելու», - ասել է Մուրադյան ընտանիքի հայրը՝ Հակոբը:**

**Մուրադյանների ընտանիքը Արմավիրի մարզի Երվանդաշատ գյուղում բնակություն է հաստատել 64 տարի առաջ: Երկար տարիներ Մուրադյանների բազմանդամ ընտանիքը ապրել է ժամանակին որպես մանկապարտեզ ծառայած եւ վերանորոգման ենթակա շինության մեջ: Առանձին բնակարան կառուցելու նրանց երազանքն անկատար է մնացել՝ երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացման պատճառով: 2005թ.-ից նրանք սկսել են նոր տան շինարարությունը, սակայն չեն կարողացել ավարտին հասցնել:**

**Տնօրհնեք նշող Ղազարյանների ընտանիքն էլ ավելի քան 25 տարի փորձել է կառուցել իր տունը: Քարը քարին են դրել, բայց ֆինանսական սուղ պայմանների պատճառով՝ այդպես էլ ավարտին չի հասցրել տան շինարարությունը: Ավելի քան 15 տարի ընտանիքն ապրել է կիսակառույց տան մեջ՝ առանց տարրական հարմարությունների: Այսօր, վերջապես, բոլոր դժվարությունները մնացել են հետեւում:**

**ՎիվաՍել-ՄՏՍ-ի ֆինանսավորմամբ իրականացվող բնակարանաշինության ծրագիրն այսօր արդեն առաջին արդյունքն է տվել: Մի քանի ամիս առաջ մեկնարկած ծրագրի առաջին ձեռքբերումն այս մարզում նշանավորվել է տնօրհնեքի արարողությամբ:**

**«Բառերով չեմ կարող նկարագրել այն երջանկությունը, որ այսօր զգում ենք. այնքա՜ն երկար ենք սպասել այս օրվան, այնքա՜ն շատ ենք աշխատել, քարը քարին դրել, որ մի օր տուն ունենանք, այնքա՜ն ենք փափագել, որ մեր որդիները վերջապես մի օր ամուր տանիք ունենան իրենց գլխին, բայց այդպես էլ չենք կարողացել... Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում ՎիվաՍել-ՄՏՍ-ին եւ «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնին», որ սահմանը պահող մարդկանց կողքին են ու այսօր, ներկա գտնվելով մեր նոր տան օրհնության արարողությանը, կիսում են մեր անսահման երջանկությունը»,-իր երախտագիտությունն է հայտնել Ղազարյան ընտանիքի մայրը՝ տիկին Գոհարը:**

**«Այստեղ յուրաքանչյուր քար դրվել է սիրով: Այդ սիրո մեջ կա նաեւ լուսավոր ապագայի հավատ: Կարեւոր է, հասկապես, այն, որ սահմանին ապրող գյուղացին զգա, որ ինքը մենակ չէ իր հոգսերի հետ, եւ որ տարբեր կազմակերպություններ ներկայացնող մարդիկ համախմբվել են, որպեսզի այս ընտանիքներն իրենց ամուր զգան իրենց հողի վրա: Այդ զգացողությունը նոր հաջողության հասնելու երաշխիք է»,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**«Հայի համար տունը սոսկ բնակարան չէ: Տունը հոգին է ընտանիքի, ապահով ապագայի երաշխիքն ու արժանապատիվ կյանքի անկյունաքարը: ՎիվաՍել-ՄՏՍ-ի ֆինանսավորմամբ Հայաստանի սահմանամերձ գյուղերում իրականացվող ծրագիրը նպատակ ունի ստեղծելու բարեկարգ ու հարմարավետ պայմաններ՝ յուրաքանչյուր ընտանիքի համար, հնարավորություն ստեղծելու աշխատելու, արարելու սեփական հողում, սիրելի տանը, ունենալու երջանիկ ապագայի երաշխիք ու հենակետ», - նշել է Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» նախագահ Աշոտ Եղիազարյանը:**

**Հիշեցնենք, որ սահմանամերձ գյուղերում բնակարանաշինության ծրագրի համար ՎիվաՍել-ՄՏՍ-ը կատարել է ֆինանսական զգալի ներդրում, իսկ Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը» ստանձնել է այդ ծրագրի իրականացումը: Այս համագործակցության շնորհիվ՝ սահմանամերձ գյուղերի 25 ընտանիք տարեվերջին կվայելի հարմարավետ տանն ապրելու երջանկությունը:**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ «**ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ**» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 28.8.2014, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: